



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ



## ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔՐԵԱԿԱՆ  
ՀԵՏԱՊՆԴՈՒՄ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԿԱՄ ՆՐԱՆ ԿԱԼԱՆԱՎՈՐԵԼՈՒ  
ՀԱՄԱՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ  
ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՆԵՆԳԱՓՈԽՎԱԾ  
ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ



ԵՐԵՎԱՆ  
ՀՈՒՆՎԱՐ 2022



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՊԱՇՏՊԱՆ**



**ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ**

**ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔՐԵԱԿԱՆ  
ՀԵՏԱՊԵՂՈՒՄ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԿԱՄ ՆՐԱՆ ԿԱԼԱՆԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ  
ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՆԵՆԳԱՓՈԽՎԱԾ  
ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

**ԵՐԵՎԱՆ 2022**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն .....3

Գլուխ 1. Անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և ազատությունից զրկելու ինստիտուտները գործադրելիս նախատեսված երաշխիքների արդյունավետության պարտադիրությունը և ձևական մոտեցումների պատճառով նենգափոխված երաշխիքների բացասական ազդեցությունը մարդու իրավունքների վրա .....6

Գլուխ 2. Մարդու սահմանադրական իրավունքները և դրանց ապահովման երաշխիքների գործողությունը քրեական դատավարությունում..... 12

Գլուխ 3. Անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին որոշումների ազդեցությունը նրա իրավունքների վրա և իրավական պաշտպանության միջոցների բացակայությունը..... 17

Գլուխ 4. Արդար դատաքննության ու մեղադրանքից պաշտպանվելու իրավունքների ապահովումը և ԿԸՀ ընթացակարգերի ու որոշումների նշանակությունը ..... 24

Գլուխ 5. Լսված լինելու իրավունքը և ԿԸՀ որոշման պատճառաբանվածությունը կարգավորումների բացակայության պայմաններում..... 32

## Ներածություն

«Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվում է, որ պատգամավորի թեկնածուի՝ մինչև պատգամավորի լիազորությունները ստանձնելն ընտրված պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությամբ: Առանց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնության՝ նա չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ, երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշված հարցի վերաբերյալ որոշում ընդունում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով: Նշված դրույթը չի տարածվում մինչև թեկնածու գրանցվելը ձերբակալված կամ կալանավորված քաղաքացիների, ինչպես նաև ձերբակալված անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և նշված անձանց կալանքի ժամկետը երկարաձգելու դեպքերի վրա:

Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացվել են բողոքներ այն մասին, որ, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի վերը նշված դրույթը կիրառվում է խիստ ձևական մոտեցումներով, որից օգտվում է քրեական հետապնդման մարմինը և կատարում է մարդու սահմանադրական իրավունքները խախտող գործողություններ: Հիմքում, մասնավորապես, այն է, որ ԿԸՀ-ում համաձայնություններ ստանալու համար միևնույն է չկա որևէ ընթացակարգ, մարդու համար սահմանված չեն իրավունքներ ու այդ իրավունքներն ապահովելու մեխանիզմներ: Քրեական հետապնդման մարմինն էլ, օգտվելով դրանից, գործում է՝ առանց հաշվի առնելու պաշտպանության կողմի իրավունքները: ԿԸՀ-ն էլ չի կարողանում ապահովել իր կազմակերպած և իր մոտ իրականացվող վարույթում այն անձանց իրավունքները, ում նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու թույլտվություն ստանալու հարց է քննարկվում:

Սույն գեկույցի հիմքում դրվել են Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքները, որոնց համաձայն՝ իրավական որևէ ընթացակարգ սահմանված չէ, նախատեսված չէ քրեական հետապնդման մարմնի միջնորդություններից, իրավունքների խախտումներից պաշտպանվելու հնարավորություն: Դատախազը կամ քննչական մարմինը գործում են այնպես, որ եթե չկա նախատեսված կարգ կամ իրավունք, ապա իրավունքներ առկա չեն կամ չունեն կարևորություն:

Այս պայմաններում թե՛ փաստաբանների, թե՛ նրանց վստահորդների պնդմամբ՝ իրենց համար ստեղծվում է անորոշ վիճակ, քանի որ մի կողմից՝ օրենքում չկա որևէ

ընթացակարգ, մյուս կողմից՝ իրենց համար գործնականում չեն երաշխավորվում իրենց իրավունքները, չի ապահովվում պաշտպանվելու որևէ հնարավորություն:

Արդյունքում՝ ԿԸՀ-ի որոշումը կայացվում է անձի իրավունքները չպահպանելով, իսկ նախատեսված ընթացակարգը ստացվում է ձևական: Ընդ որում, ԿԸՀ-ն ինքը գործուն միջոց չի ձեռնարկում՝ անձի իրավունքները ապահովելու համար: Կարգավորումների բացակայության պատճառով անգամ փորձ չի արվում թույլ չտալու, որ անձի իրավունքները խախտվեն: Խնդիրն էլ այն է, որ ընթացակարգի արդյունքում կայացվող որոշումները քրեական հետապնդման մարմնի համար դառնում են անձի իրավունքները սահմանափակող գործողությունների հիմք: Ընդ որում, ինչպես նշում են փաստաբանները, վարույթն իրականացնող մարմինն էլ հետագայում քրեական հետապնդումը կամ ազատությունից զրկելը վիճարկելու ժամանակ անընդհատ պաշտպանվում է պնդումներով կամ հիմնավորումներով, որ դրանք իրավաչափ են, քանի որ ԿԸՀ-ն արդեն տվել է համաձայնությունը:

Այսինքն՝ ստացվում է՝ ԿԸՀ-ում հարցի քննարկմամբ ու կայացվող որոշմամբ լեգիտիմացվում են իրավունքների հնարավոր սահմանափակումներն ապագայում: Այլ կերպ ասած, վարույթն իրականացնող մարմինն ինքն իրեն ապահովագրում է: Ընդ որում, սկզբունքային է այն, որ ԿԸՀ-ի ընթացակարգի ելքը, որոշումներն արդեն իսկ հստակ կանխորոշված են դատախազի կամ քննչական մարմնի համար, այսինքն՝ միանշանակ վստահությամբ նախապես հայտնի է, որ քրեական մարմնի միջնորդությունը բավարարվելու է: Նշվածին ավելանում է նաև այն, որ ԿԸՀ-ն ինքն է հրաժարվում կարգավորումների բացակայության պատճառով իրականացնել գործի կամ հարցի ուսումնասիրություն:

Սույն գեկույցում կոնկրետ օրինակներով և միջազգային-իրավական կարգավորումների լույսի ներքո ներկայացված են մարդու իրավունքների համար խորքային վտանգներ, ինչպես նաև մարդու սահմանադրական իրավունքների ոտնահարման գործնական իրավիճակներ:

Խնդրի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը դիմել է Սահմանադրական դատարան՝ վիճարկելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ, 63-րդ, 67-րդ, 75-րդ, 79-րդ և 81-րդ հոդվածներին այնքանով, որքանով սահմանված չեն մարդու նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությունն ստանալու պատշաճ կառուցակարգեր և ընթացակարգային նորմեր, ինչը հանգեցնում է մարդու սահմանադրական իրավունքների խախտման:

Սույն զեկույցի հրապարակման պահի դրությամբ Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշում առկա չէ:

**Գլուխ 1. Անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և ազատությունից զրկելու ինստիտուտները գործադրելիս նախատեսված երաշխիքների արդյունավետության պարտադիրությունը և ձևական մոտեցումների պատճառով նենգափոխված երաշխիքների բացասական ազդեցությունը մարդու իրավունքների վրա**

Քրեական հետապնդման հարուցումը և անձին ազատությունից զրկելը կապված են մարդու սահմանադրական իրավունքների հետ: Խոսքը, մասնավորապես վերաբերում է այդ իրավունքներին պետության միջամտությանը ամենից ոխակային՝ քրեական արդարադատության ոլորտում: Սա նշանակում է, որ պետք է լինեն պետության այդ միջամտության սահմանները հստակ կանոնակարգող նորմեր, որոնք ոչ թե ինքնանպատակ են, այլ ունեն կոնկրետ իմաստ և նշանակություն: Միայն այդ դեպքում ի ցույց կդրվի պետության հետապնդած նպատակը, որով միջամտությունն էլ կհամապատասխանի հետապնդած նպատակին կանխատեսելի կլինի մադու համար:

Առավել կոնկրետ՝ թե՛ քրեական հետապնդման հարուցման, թե՛ ազատությունից զրկման ինստիտուտների գործադրման ընթացքում քրեադատավարական սկզբունքներից և երաշխիքներից շեղումը, առավել ևս դրանց կիրառման կազմակերպական կառուցակարգերի ու ընթացակարգերի բացակայությունը անխուսափելիորեն հանգեցնելու է մարդու իրավունքների խախտման, ինչն անթույլատրելի է: Արդյունքում էլ այն նորմերը, որոնք պետք է ծառայեն՝ որպես մարդու իրավունքների երաշխիք, նենգափոխվում են, վեր են ածվում ձևական կանոնների, որոնք պարզապես դադարում են ծառայել պետության հետապնդելիք իրավաչափ նպատակներին՝ հանցագործության դեմ պայքարում դառնալով քրեական հետապնդման մարմինների չարաշահումների գոհր:

Սույն զեկույցում քննարկման առարկա դարձած կարգավորումները խնդիրներ են առաջացրել գործնականում, ինչի մասին փաստում են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքները, այն անձանցից, որոնց նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել կամ որոնք կալանավորվել են Ընտրական օրենսգրքի՝ քննարկվող նորմերի գործադրման արդյունքում:

Այս խնդիրները Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացվել են ինչպես ազատությունից զրկման վայրերում, այնպես էլ փաստաբանների հետ առանձնազրույցներով ու քննարկումներով:

2021 թվականի հունիսի 20-ին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների ինչպես նախորդող, այնպես էլ հաջորդող ժամանակահատվածում հարուցվել են մի շարք քրեական գործեր, նախաձեռնվել են

քրեական հետապնդումներ խորհրդարանական արտահերթ ընտրություններին՝ որպես պատգամավորության թեկնածու մասնակցող անձանց նկատմամբ:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բոլոր բողոքներն ու մտահոգությունները ենթարկվել են բազմակողմանի վերլուծության: Նշվածների թվում Պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացրած՝ պատգամավորի թեկնածուների նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին որոշումները, կից նյութերն՝ ամբողջ ծավալով, ինչպես նաև իրականացվել այլ աղբյուրներից ստացած տվյալների վերլուծություն:

Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքներում առկա են եղել պնդումներ այն մասին, որ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 90-րդ հոդվածի 5-րդ մասը կիրառվում է խիստ ձևական մոտեցումներով, որից օգտվում է քրեական հետապնդման մարմինը և կատարում է մարդու սահմանադրական իրավունքները խախտող գործողություններ: Հիմքում, մասնավորապես, այն է, որ ԿԸՀ-ում համաձայնություններ ստանալու համար միևնույն է չկա որևէ ընթացակարգ, մարդու համար սահմանված չեն իրավունքներ ու այդ իրավունքներն ապահովելու մեխանիզմներ: Քրեական հետապնդման մարմինն էլ, օգտվելով դրանից, գործում է առանց հաշվի առնելու պաշտպանության կողմի իրավունքները: ԿԸՀ-ն էլ չի կարողանում ապահովել իր կազմակերպած և իր մոտ իրականացվող վարույթում այն անձանց իրավունքները, ում նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու թույլտվություն ստանալու հարց է քննարկվում:

Ըստ բողոքների՝ իրավական որևէ ընթացակարգ սահմանված չէ, նախատեսված չէ քրեական հետապնդման մարմնի միջնորդություններից, իրավունքների խախտումներից պաշտպանվելու հնարավորություն: Դատախազը կամ քննչական մարմինը գործում են այնպես, որ եթե չկա նախատեսված կարգ կամ իրավունք, ապա իրավունքներ առկա չեն կամ չունեն կարևորություն:

Այս պայմաններում թե՛ փաստաբանների, թե՛ նրանց վստահորդների պնդմամբ՝ իրենց համար ստեղծվում է անորոշ վիճակ, քանի որ մի կողմից՝ օրենքում չկա որևէ ընթացակարգ, մյուս կողմից՝ իրենց համար գործնականում չեն երաշխավորվում իրենց իրավունքները, չի ապահովվում պաշտպանվելու որևէ հնարավորություն:

**Արդյունքում՝ ԿԸՀ-ի որոշումը կայացվում է անձի իրավունքները չափահասելով, իսկ նախատեսված ընթացակարգը ստացվում է ձևական: Ընդ որում, ԿԸՀ-ն ինքը գործուն միջոց չի ձեռնարկում՝ անձի իրավունքները ապահովելու համար: Կարգավորումների բացակայության պատճառով անգամ փորձ չի արվում թույլ չտալու, որ անձի իրավունքները խախտվեն: Խնդիրն էլ այն է, որ ընթացակարգի**



արդյունքում կայացվող որոշումները քրեական հետապնդման մարմնի համար դառնում են անձի իրավունքները սահմանափակող գործողությունների հիմք: Ընդ որում, ինչպես նշում են փաստաբանները, վարույթն իրականացնող մարմինն էլ հետագայում քրեական հետապնդումը կամ ազատությունից զրկելը վիճարկելու ժամանակ անընդհատ պաշտպանվում է պնդումներով կամ հիմնավորումներով, որ դրանք իրավաչափ են, քանի որ ԿԸՀ-ն արդեն տվել է համաձայնությունը:

Այսինքն՝ ստացվում է՝ ԿԸՀ-ում հարցի քննարկմամբ ու կայացվող որոշմամբ լեգիտիմացվում են իրավունքների հնարավոր սահմանափակումներն ապագայում: Այլ կերպ ասած, վարույթն իրականացնող մարմինն ինքն իրեն ապահովագրում է: Ընդ որում, սկզբունքային է այն, որ ԿԸՀ-ի ընթացակարգի ելքը, որոշումները արդեն իսկ հստակ կանխորոշված են դատախազի կամ քննչական մարմնի համար, այսինքն՝ միանշանակ վստահությամբ նախապես հայտնի է, որ քրեական մարմնի միջնորդությունը բավարարվելու է: Նշվածին ավելանում է նաև այն, որ ԿԸՀ-ն ինքն է հրաժարվում կարգավորումների բացակայության պատճառով իրականացնել գործի կամ հարցի ուսումնասիրություն (նշվածի փաստարկները մանրամասն կներկայացված են սույն զեկույցի հետագա շարադրանքում):

Օրինակ՝ գործերից մեկով փաստաբանը տեղեկացրել է, որ իր վստահորդ ԱԺ պատգամավորի թեկնածու գրանցված անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու և կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություններ է ներկայացվել Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Այսպես, ըստ փաստաբանի՝ ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում քննվող քրեական գործերից մեկով 2021 թվականի հուլիսի 7-ին՝ ժամը 17:10-ին Ոստիկանության Մեղրիի բաժնի Ագարակի բաժանմունքը ԱԺ պատգամավորի թեկնածու գրանցված անձին Ագարակում ծանուցում է հանձնել այն մասին, որ նույն օրը՝ ժամը 22:00-ին Երևան քաղաքում տեղի է ունենալու Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստը, որի ընթացքում պետք է քննարկվի ԱԺ պատգամավորի թեկնածու գրանցված անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և կալանավորելու համաձայնություն ստանալու միջնորդությունը:

Փաստաբանի պնդմամբ՝ ԱԺ պատգամավորի թեկնածու գրանցված անձի գտնվելու վայրից՝ Ագարակ քաղաքից Երևան հասնելու համար անհրաժեշտ է 6-7 ժամ, սակայն վերջինս նիստի տեղի և ժամանակի մասին ծանուցվել է ընդամենը 2 ժամ 40 րոպե առաջ: Ըստ բողոքի՝ ծանուցումը եղել է ձևական, քանի որ վերը նշված ժամկետում ողջամտորեն անհնար կլինեին ԱԺ պատգամավորի թեկնածու գրանցված անձի մասնակցությունը Հանձնաժողովի նիստին: Փաստաբանի տեղեկացմամբ՝ վստահորդը նիստը հետաձգելու խնդրանքով դիմում է ներկայացրել ԿԸՀ:

Չնայած Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հետաձգել է նիստը՝ այն նշանակելով 2021 թվականի հուլիսի 12-ին՝ ժամը 08:30-ին, այնուամենայնիվ, ըստ փաստաբանի՝ իր վստահորդը դրա մասին ծանուցվել է մի քանի ժամ հետո՝ ուշ գիշերով: Ուստի, կրկին հնարավորություն չի ունեցել մասնակցել նիստին, սակայն այդ մասին մի շարք միջոցներով տեղեկացրել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին: Արդյունքում՝ նիստն անցկացվել է առանց ԱԺ պատգամավորի թեկնածու գրանցված անձի մասնակցության, իսկ նիստի արդյունքում դատախազի ներկայացրած միջնորդությունը բավարարվել է:

Փաստաբանը նշել է, որ թեև Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ծանուցել է ԱԺ պատգամավորի թեկնածու գրանցված անձին գործի քննության վայրի և ժամի մասին, այնուհետև հետաձգել է նիստը, այնուամենայնիվ, առկա չեն եղել այնպիսի օբյեկտիվ պայմաններ, որոնք հնարավորություն կտային անձին նշված ժամին հասնել համապատասխան վայր և մասնակցել վարույթին:

Ըստ փաստաբանի՝ 2021 թվականի հուլիսի 11-ին ԱԺ պատգամավորի թեկնածու գրանցված անձը տեղեկացել է, որ նույն օրը գիշերվա ժամին իր տուն է գնացել Ոստիկանության Ագարակի բաժանմունքի պետը՝ ծանուցում հանձնելու համար, սակայն ըստ ԱԺ պատգամավորի թեկնածու գրանցված անձի՝ քանի որ ինքը տանը չի գտնվել, Ոստիկանությունն այդ մասին արձանագրություն է կազմել և հեռացել: Ըստ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքի՝ ԱԺ պատգամավորի թեկնածու գրանցված անձը փորձել է կապ հաստատել Ոստիկանության բաժանմունքի պետի հետ, սակայն պատասխան չի ստացել, Ոստիկանության բաժանմունքի պետը ցուցաբերել է ձևական մոտեցում, նա շահագրգռված չի եղել այդ ծանուցագիրը ԱԺ պատգամավորի թեկնածու գրանցված անձին հանձնելու հարցում: Ըստ որում, դատաբանը վերջինիս ձերբակալման իրավաչափության դեմ ներկայացված բողոքը քննելիս նշել է հետևյալը. «ԱԺ պատգամավորի թեկնածու գրանցված անձի՝ վարույթն իրականացնող մարմին ներկայանալու և քննչական կամ այլ դատավարական գործողության մասնակցելու անհրաժեշտության մասին **պատշաճ ծանուցված չլինելն** առավելապես պայմանավորված է եղել հետաքննության մարմնի անգործությամբ»:

Փաստաբանի տեղեկացմամբ՝ հետագայում ԱԺ պատգամավորի թեկնածու գրանցված անձն այլ եղանակով է գիշերվա ժամին տեղեկացել նշանակված նիստի ժամի մասին, և ԿԸՀ նիստին մասնակցելու նպատակով Ագարակից ուղևորվել է Երևան, սակայն ճանապարհին մեքենայի անվադողը վնասվել է և ճանապարհը շարունակել չի կարողացել: Նա, մասնավորապես, նշել է, որ գիշերային ժամի և մոտակայքում համապատասխան սպասարկման վայրեր չլինելու պատճառով մեքենայի վերանորոգումը ձգձգվել է, և նշանակված ժամին չի կարողացել ժամանել Երևան, ինչի մասին մի շարք եղանակներով հայտնել է ԿԸՀ-ին՝ խնդրելով նշանակված նիստը մի

քանի ժամով հետաձգել: Ըստ փաստաբանի՝ նույն օրը տեղեկացել են, որ Հանձնաժողովը, խախտելով ԱԺ պատգամավորի թեկնածու գրանցված անձի իրավունքները, առանց նրա մասնակցության հրատապ նիստ է անցկացրել և բավարարել դատախազի միջնորդությունը: Սա, ըստ փաստաբանի, վկայում է, որ փաստացի բացակայում է ԿԸՀ-ի՝ օրենքով սահմանված կարգով տված համաձայնությունը՝ ԱԺ պատգամավորի թեկնածու գրանցված անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և ազատությունից զրկելու վերաբերյալ:

Մեկ այլ դեպքով՝ պատգամավորի թեկնածուի փաստաբանները տեղեկացրել են, որ թեև վարույթն իրականացնող մարմինը տեղյակ է եղել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ քրեական հետապնդում հարուցելու և կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համաձայնություն տալու վերաբերյալ նիստի ավարտված չլինելու մասին, ընդմիջման ժամին Ոստիկանությունը ԿԸՀ-ի մուտքի դիմաց ծանուցագիր է հանձնել իրենց վստահորդին՝ որպես կասկածյալ հրավիրելով ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչություն: Ըստ փաստաբանների՝ նշված ծանուցագրի վրա նշված հրավերի ժամի հատվածը լրացված է եղել գրիչով, ակնհայտորեն քանիցս ջնջված և նոր ժամ է նշված եղել:

**Ըստ փաստաբանի և նրա վստահորդի՝ այս իրավիճակի պատճառն այն է, որ քրեական հետապնդման մարմինն այնքան համոզված է եղել ԿԸՀ-ում իր միջնորդության քննարկման ելքի հարցում, որ երբ հայտարարվել է ընդմիջում, մեխանիկորեն հասկացել են, թե վերջնական որոշումը ԿԸՀ-ն արդեն կայացրել է: Իհարկե, պարզ է, որ խոսքը վերաբերում է քրեական հետապնդման օգտին որոշման կայացմանը: Վարույթն իրականացնող մարմինն ինքը այս հարցի առնչությամբ փաստաբանին տեղեկացրել է, որ այդ ծանուցագիրը Ոստիկանության աշխատակիցը հանձնել է ավելորդ շտապողականության արդյունքում: Այստեղ հստակ է, որ վարույթն իրականացնող մարմինը համոզված է եղել, որ միջնորդությունն արդեն բավարարվել է, քանի որ իր համար ի սկզբանե ակնհայտ է եղել, որ միևնույն է բավարարվելու է: Դա անգամ ակնհայտ է եղել Ոստիկանության համար:**

Նման համոզմունքի հիմքերից մեկն էլ այն է, որ վարույթը կանոնակարգված չէ, կառուցակարգերը բացակայում են և որոշումը կայացվում է առանց միջնորդության հանգամանքների քննության կամ ուսումնասիրության: Արդյունքում ստացվում է՝ կայացվում է չպատճառաբանված, հիմնավորումներից զուրկ որոշում: Ասվածը ևս մեկ անգամ փաստում է, որ առկա կառուցակարգերի պարագայում օրենքով նախատեսված երաշխիքը կրում է ձևական բնույթ, իսկ մարդու նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համաձայնության հարցի քննարկման գործընթացը քրեական հետապնդման

**մարմնի օգտին նախապես կանխորոշված ելքով մեխանիկական աշխատանք է՝ առանց որևէ բովանդակային քննարկման:**

Մեկ այլ գործով փաստաբանը և իր վստահորդը՝ հրաժարվել են մասնակցել վերջինիս նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդության քննարկման նիստին՝ նկատի ունենալով, որ այդ ընթացակարգը որևէ նշանակություն չունի, ընթանում է իրավունքների խախտումներով և միևնույն է դա ոչինչ չի փոխելու, իսկ ԿԸՀ-ն էլ միևնույն է՝ մեխանիկորեն բավարարում է միջնորդությունները: Ուստի, այս գործով փաստաբանը ևս եզրահանգել է, որ գործընթացը խիստ ձևական է, իսկ արդյունքը՝ նախապես հայտնի, հստակ կանխորոշված:

Քննարկվող դեպքերում, չնայած Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստերը կայացել են և կայացվել են քրեական հետապնդման մարմնի միջնորդություններով ներկայացված անձանց նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համաձայնության որոշումներ, պետք է հստակ ամրագրել, որ **այդ գործընթացը հաճախ իրականացվել է անգամ առանց տվյալ անձի մասնակցության, ով պետության ոչ լիարժեք ու թերի գործադրած միջոցների արդյունքում հնարավորություն չի ունեցել մասնակցել իրեն առնչվող գործի քննությանը, հնարավորություն չի ունեցել իրացնել, օրինակ, լսված լինելու, հակառակ կողմի միջնորդության վերաբերյալ իր դիրքորոշումը հայտնելու և պաշտպանվելու իրավունքներից:** Այս առումով, հատկանշական է, որ սահմանված պաշտպանության միջոցները պետք է արդյունավետ լինեն թե՛ գործնական և թե՛ օրենսդրական առումներով: Պաշտպանության միջոցներից օգտվելը չպետք է անհիմն խոչընդոտվի պետական մարմինների գործողություններով կամ անգործությամբ<sup>1</sup>:

Ավելին, մարդու իրավունքների ապահովման հարցը չի կարող ինքնանպատակ լինել՝ այն պետք է հնարավորություն ստեղծի ինչպես իրավունքի սուբյեկտին, այնպես էլ որոշում կայացնողին քննության առարկա դարձնել անհրաժեշտ բոլոր տվյալները: Հենց միայն նման հիմքով է հնարավոր ապահովել «արդարացի լսումը» (fair hearing) և կայացնել վերջնական ու պատճառաբանված (հիմնավոր) որոշում

Սույն զեկույցում վերը նշված հարցը քննարկված է մի քանի դիտարկմամբ, որոնք ներկայացվում են ստորև:

---

<sup>1</sup> Ի թիվս այլնի, տե՛ս նաև Իվանովն և այլոք ընդդեմ Բուլղարիայի (Ivanov and Others v. Bulgaria) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2006 նոյեմբերի 24-ի վճիռը, կետ 70:

## **Գլուխ 2. Մարդու սահմանադրական իրավունքները և դրանց ապահովման երաշխիքների գործողությունը քրեական դատավարությունում**

Քրեական դատավարության ոլորտը մարդու իրավունքների տեսանկյունից ամենառիսկայինն է: Այս ոլորտում է, որ բարձր կշիռ ունի գաղտնիության և հանրային պաշտպանության բաղադրիչը, որի ուժով այն պետք է հավասարակշռվի մասնավոր շահերի պաշտպանությամբ: Սա իր հերթին նշանակում է, որ քրեական դատավարության ոլորտում ներգրավված յուրաքանչյուր մարդու համար նախատեսված երաշխիքները պետք է լինեն կոնկրետ և իմաստավորված, որպեսզի հնարավոր լինի դրանք իրական ծառայեցնել մարդու իրավունքներին և օրինական շահերին:

Քրեական դատավարության ոլորտում սա հատկապես արդիական է, քանի որ գործ ունենք սահմանադրական իրավունքների սահմանափակման բարձր ռիսկերի հետ:

**Հաշվի առնելով, որ ոլորտում մեծ է քրեական հետապնդման մարմինների գայթակղությունը հանրային շահերի պաշտպանության «արդարացումով» միջամտելու մարդու իրավունքներին, ապա այդ իրավունքների յուրաքանչյուր երաշխիք պետք է ունենա գործադրման հստակ մեխանիզմ, կոնկրետ ընթացակարգ: Հակառակ դեպքում այն պարզապես կվերածվի պատրանքային ու ձևական կանոնի, որը միայն կօգտագործվի՝ որպես շղարշ մարդու իրավունքների սահմանափակումները հենց այդ իրավունքների պաշտպանության համար նախատեսված, բայց չարաշահվող երաշխիքով հիմնավորելու համար:**

**Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:**

Սահմանադրական դատարանի 2018 թվականի հունիսի 18-ի թիվ ՍԴՈ-1420 որոշմամբ արտահայտված դիրքորոշման համաձայն՝ Սահմանադրության 75-րդ հոդվածի պահանջն է, որ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանեն այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Հետևաբար, այս տեսանկյունից Սահմանադրական դատարանը կարևորում է ոչ միայն իրավունքի իրացման կարգի օրենքով նախատեսման սուկ փաստը, այլև նման կարգի արդյունավետությունը, այսինքն՝ օրենքի նորմերում բովանդակվող իրավակարգավորիչ այնպիսի միջոցների, ձևերի առկայությունը և դրանց գործադրման հնարավորությունը, որոնք կերաշխավորեն սահմանադրորեն կանխորոշված նպատակի լիարժեք իրացումը՝ կոնկրետ դեպքում հաշվի առնելով նաև Սահմանադրության 78-րդ, 79-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածների պահանջները:

Սահմանադրական դատարանը 2020 թվականի մայիսի 12-ի թիվ ՍԴՌ-1529 որոշմամբ արձանագրել է, որ Սահմանադրությունը պարտավորեցնում է օրենսդրին ստեղծել հիմնական իրավունքների և ազատությունների սահմանադրական չափորոշիչների կենսագործման համար անհրաժեշտ և արդյունավետ կառուցակարգ:

Անդրադառնալով Սահմանադրության 75-րդ հոդվածի բովանդակությանը՝ Սահմանադրական դատարանը 2020 թվականի հունիսի 18-ի թիվ ՍԴՌ-1546 որոշմամբ արձանագրել է, որ ցանկացած օրենսդրական կարգավորում, այլ ոչ թե միայն որևէ հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակում, պետք է նպատակ ունենա և ապահովի բոլոր հիմնական իրավունքների **(1) արդյունավետ իրականացման համար (2) անհրաժեշտ (3) կազմակերպական (4) կառուցակարգեր և (5) ընթացակարգեր:** *Միայն բոլոր այս պայմանների միաժամանակյա առկայությունը ցանկացած օրենսդրական կարգավորման մեջ, առավել ևս որևէ հիմնական իրավունք կամ ազատություն սահմանափակող օրենսդրական կարգավորման մեջ, կարող է ապահովել դրա համապատասխանությունը Սահմանադրությանը<sup>2</sup>:*

Սահմանադրական դատարանի 2020 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ ՍԴՌ-1571 որոշմամբ արտահայտված դիրքորոշման համաձայն՝ պետությունը պետք է ստեղծի անհրաժեշտ երաշխիքներ մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացման համար: **Պետությունը պարտավորվում է** ոչ միայն ճանաչել, պահպանել և պաշտպանել իրավունքները և ազատությունները, այլև **ստեղծել պետական-իրավական այնպիսի կառուցակարգեր, որոնք արդյունավետ ձևով կարող են կանխել, վերացնել դրանց ցանկացած խախտումներ, վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները:**

Սահմանադրական դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ ՍԴՌ-1119 որոշման համաձայն՝ օրենսդրական մակարդակում չպետք է սահմանվեն այնպիսի իրավական կառուցակարգեր, որոնք առաջին հայացքից հանդես են գալիս որպես երաշխիքներ տվյալ իրավական կառուցակարգի իրացման համար, սակայն կարգավորումների մանրամասներում փաստացիորեն իմաստազրկում են կամ սահմանափակում այդ իրավական կառուցակարգերը: Պետական մարմինների առջև իրավական պաշտպանության և իրավաբանական օգնություն ստանալու իրավունքների իրացմանն օրենսդրորեն կարող են առաջադրվել որոշակի պահանջներ կամ նշված իրավունքների իրացման կարգերը կարող են պարունակել որոշակի ձևական

---

<sup>2</sup> Այս գործով Սահմանադրական դատարանը գտել է, որ օրենսդրությամբ ընդհանրապես առկա չեն կառուցակարգեր կամ ընթացակարգեր, որոնք հնարավորություն կտան անձին իրազեկվել մասնավոր կյանքի անձեռնմխելիության իր հիմնական իրավունքին միջամտող որոշումների կամ գործողությունների մասին և պաշտպանվելու դրանցից պատշաճ դատավարական ընթացակարգերի շրջանակներում:

պայմաններ, որոնք, սակայն, չպետք է լինեն այն ծավալով, որ անարդյունավետ դարձնեն այդ իրավունքների իրացումը, խեղաթյուրեն դրանց էությունը կամ վերածվեն իրավունքի այնպիսի սահմանափակման, որը չի հետապնդում որևէ իրավաչափ նպատակ:

Սահմանադրական դատարանի 2021 թվականի մարտի 2-ի թիվ ՍԴՈ-1579 որոշմամբ արտահայտված դիրքորոշման համաձայն՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում օրենսդրական կարգավորումները և դրանց տրված մեկնաբանությունը պետք է կառուցվեն Սահմանադրությամբ ամրագրված դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների էության անխախտելիության և դրանց իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելու պահանջի համատեքստում՝ զերծ մնալով այնպիսի կարգավորումներից, որոնք չեն ապահովում կամ խոչընդոտում են վերը նշված իրավունքների իրացումը:

Հարկավոր է փաստել, որ կառուցակարգերի բացակայությունը խնդիրներ է առաջացնում ոչ միայն անձանց համար՝ իրենց նկատմամբ կիրառման ենթակա նորմերի կանխատեսելիության առումով, այլև համապատասխան կարգավորումները կիրառող մարմնի համար, և որ ամենակարևորն է՝ վերջինս, անկասկած, կարող է հանգեցնել մարդու մի շարք հիմնարար իրավունքների իրացման անհնարինության և խախտումների:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ նորմը չի կարող համարվել «օրենք», քանի դեռ ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որպեսզի անձին հնարավորություն տա կարգավորելու իր վարքագիծը. **անձը պետք է կարողանա ելնելով կոնկրետ հանգամանքներում ողջամիտ կերպով կանխատեսել իր գործողության հետևանքները**<sup>3</sup>:

«Սահմանադրական դատարանի նախադեպային պրակտիկան ևս բացահայտել է իրավական որոշակիության սկզբունքի իրավական բովանդակությունը՝ մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորման միջազգային մոտեցումներին համահունչ: Այսպես, ըստ Բարձր դատարանի իրավական դիրքորոշումների՝

✓ Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլնի, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ **իրավունքի**

<sup>3</sup> Տե՛ս Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի (Busuioc v. Moldova) գործով 2005 թվականի մարտի 21-ի վճիռը, գանգատ թիվ 61513/00, կետ 52: Ռեկվենյին ընդդեմ Հունգարիայի (Rekvenyi v. Hungary) գործով 1999 թվականի մայիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 25390/94, կետ 34: Օլսսոնն ընդդեմ Շվեդիայի (Olsson v. Sweden (No. 1)) գործով 1988 թվականի մարտի 24-ի վճիռը, գանգատ թիվ 10465/83, կետ 61: Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի (Busuioc v. Moldova) գործով 2005 թվականի մարտի 21-ի վճիռը, գանգատ թիվ 61513/00, կետ 52: Ռեկվենյին ընդդեմ Հունգարիայի (Rekvenyi v. Hungary) գործով 1999 թվականի մայիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 25390/94, կետ 34: Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Sunday Times v. The United Kingdom) գործով 1979 թվականի 26-ի վճիռը, գանգատ թիվ 6538/74, կետ 49 և այլն:

սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում<sup>4</sup>:

✓ Իրավական որոշակիության սկզբունքն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան **հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները** և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում<sup>5</sup>:

✓ Իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ **իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ<sup>6</sup>**:

✓ Հիմնական իրավունքները կամ ազատությունները սահմանափակող օրենքների հստակությունը, կանխատեսելիությունը և մատչելիությունն ուղիղ համեմատական են հիմնական իրավունքի սահմանափակման աստիճանին. **որքան ավելի ինտենսիվ է այդ սահմանափակումը, այնքան ավելի հստակ, կանխատեսելի և մատչելի պետք է լինեն հիշյալ օրենքների ձևակերպումները**, որպեսզի երկիմաստություն չառաջացնեն մասնավոր անձանց համար արգելքների, այլ սահմանափակումների կամ նրանց վրա դրված պարտականությունների առկայության և բովանդակության հարցում<sup>7</sup>:

Նշված համատեքստում առավել արդիական է դառնում քրեական հետապնդման հարուցման ու ազատությունից զրկման պարագայում, քանի որ մի դեպքում գործի է դրվում քրեական հետապնդման ողջ մեխանիզմը, իսկ մյուս դեպքում մարդը զրկվում է ազատությունից:

**Վերը շարադրված կանոններն ակնհայտորեն վկայում են, որ խնդրո առարկա նորմի որոշակիության, իրավունքներն ապահովող երաշխիքների բացակայությունը հանգեցնում է մարդու համար անորոշության իր պաշտպանության հնարավորությունների հարցում, իսկ քրեական հետապնդման մարմինների համար քրեական հետապնդում հարուցելու և կալանավորումը՝ որպես խափանման միջոց ընտրելու կամ որ նույնն է՝ ազատությունից զրկելու համաձայնություն տալու որոշման վարույթի արդյունքների կանխորոշվածության: Գործնականում էլ դա դարձել է ի վնաս անձի և հօգուտ քրեական հետապնդման մարմնի կանխորոշվածության: Դա էլ իր հերթին գործնական արտացոլում է գտնում իրավապահ, ու առհասարակ, քրեական գործով վարույթ իրականացնող մարմինների**

<sup>4</sup> Սահմանադրական դատարանի 2008 թվականի մայիսի 13-ի թիվ ՍԴՈ-753 որոշումը:

<sup>5</sup> Տե՛ս Սահմանադրական դատարանի ՍԴՈ-630, ՍԴՈ-1142, ՍԴՈ-1289 որոշումները և այլն:

<sup>6</sup> Տե՛ս Սահմանադրական դատարանի 2015 թվականի հունիսի 9-ի թիվ ՍԴՈ-1213 որոշումը:

<sup>7</sup> Տե՛ս Սահմանադրական դատարանի 2019 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՍԴՈ-1488 որոշումը:



արարքներում: Կոնկրետ գործերով փաստաբաններն էլ, նկատի ունենալով վարույթի թե՛ ձևական, թե՛ կանխորոշված բնույթը, ինչպես նաև կոնկրետ դեպքում ԿԸՀ-ում նախկինում կայացած նիստերը, անգամ նպատակահարմար չեն գտնում մասնակցել նիստերի, իսկ մասնակցությունը համարում են անիմաստ: Արդյունքում էլ մարդու իրավունքների առավել նպաստավոր պաշտպանության համար նախատեսված երաշխիքը դառնում է պարզապես պետության չարաշահման համար նպաստավոր հիմք ու նույնիսկ արդարացում (excuse):

**Գլուխ 3. Անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին որոշումների ազդեցությունը նրա իրավունքների վրա և իրավական պաշտպանության միջոցների բացակայությունը**

Սույն զեկույցով քննարկման առարկա դարձած նորմի ընդհանրական բովանդակությամբ պայմանավորված՝ իրավական անորոշությունն իրավակիրառ պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանության ու կիրառման, որը առաջ է բերում սահմանադրական կոնկրետ իրավունքների անխուսափելի խախտումներ:

Նախ, պետք է նշել, որ հենց քննարկվող նորմի կիրարկման արդյունքում է, որ մեխանիզմը քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն տալու որոշմամբ գործի է դրվում քրեադատավարական համակարգն ամբողջությամբ: Ընդ որում, սա անկյունաքարային որոշում է, քանի որ միայն այդ որոշումից հետո է հնարավոր անձին քրեադատավարական ոլորտ ներգրավել կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակով, միայն այդ որոշումից հետո է «վառվում» մարդու իրավունքների առավել միջամտող գործողությունների «կանաչ լույսը»:

**Հարցն այն է, որ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համաձայնության պարագայում քրեական հետապնդման մարմինը հնարավորություն է ստանում իրականացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված բոլոր գործողությունները, այդ թվում՝ հարկադրանքի միջոցներ: Այսինքն՝ պետական մարմինը, կոնկրետ դեպքում՝ ԿԸՀ-ն, օրենքով լիազորված է ընդունել այնպիսի որոշում, որով գործարկվում է քրեադատավարական մեխանիզմը՝ դրվում է քրեական հետապնդման սկիզբը:**

Ասվածն իր հերթին նշանակում է, որ քրեական հետապնդման մեխանիզմը գործադրելու թույլտվություն տվող մարմնի համար այդ թույլտվությունը տալու ընթացակարգին վերաբերող կարգավորումներն առավել ևս պետք է լինեն հստակ, ճշգրիտ ու արդյունավետ՝ ապահովելով կոնկրետ մարդու իրավունքների լիարժեք երաշխավորում: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին և Հանձնաժողովում հարցի քննությանը:

Քննարկվող համատեքստում պետք է հիշել մի կարևոր գործոն: Մասնավորապես, եթե կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդության վերաբերյալ ԿԸՀ-ի համաձայնության պարագայում անձին կալանավորելու կամ այլ կերպ՝ ազատությունից զրկելու հարցը դեռ պետք է լուծի դատարանը, ապա քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ համաձայնություն տալու արդյունքում անմիջապես գործի է դրվում մի «մեքենա», որը վարույթն իրականացնող մարմնին հնարավորություն

է տալիս կիրառել քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված ողջ գործիքակազմը:

Ազատությունից զրկելու հետ կապված էլ թեև պետական մարմինը, կոնկրետ դեպքում՝ ԿԸՀ-ն տալիս է կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ նման համաձայնություն, և այն հետագայում որոշվում է դատական կարգով, այնուամենայնիվ հստակ ընթացակարգի բացակայությունը և նորմի անորոշությունը հանգեցնում են անձնական ազատության իրավունքի հետ կապված խնդիրների, չեն ապահովում բավարար նվազագույն երաշխիքներ, որպեսզի մյուս սահմանադրական իրավունքների պահպանմամբ հաղթահարվի երաշխիքային նշանակության կանոնը:

Հարցն այն է, որ ինչպես Մարդու իրավունքների պաշտպանին տեղեկացրել են փաստաբանները և Ընտրական օրենսգրքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի գործադրումից հետո կալանավորված անձինք, ԿԸՀ-ի որոշումից հետո կալանքի միջնորդություն քննող դատարանը չի անդրադառնում իրենց բարձրացրած հարցերին, որ վերաբերում են ԿԸՀ-ում ազատությունից զրկելու համաձայնություն տալուն:

Մասնավորապես, խոսքը վերաբերում է այնպիսի մտահոգությունների, որոնք առնչվում են ազատության իրավունքին, դրա երաշխիքներին, վերջիններիս խախտումների ազդեցությանն ազատության իրավունքի վրա: **Եվ քանի որ ընդհանուր իրավասության դատարանը ձևավորում է պրակտիկա, որով անթույլատրելի կերպով ուշադրություն չի դարձնում ազատության իրավունքի վրա ազդող խախտումներին, ապա դրանով ինքնուրույնացնում է, որոշակի առանձնացվածություն է տալիս ԿԸՀ-ում վարույթին, որով առավել ևս արդիական է դառնում այստեղ հարցի քննության ու մարդու իրավունքների պահպանման կարևորությունը:**

Թեև մյուս կողմից մարդու իրավունքների պաշտպանի համար խնդրահարույց է՝ ինչպե՞ս կարող է դատարանն ընդհանրապես փակել ԿԸՀ-ում հնարավոր խախտումների «թեման» ու չմտնել դրա մեջ առհասարակ: Պետք է հաշվի առնելով, որ կարող են տեղի ունենալ խախտումներ, որոնք ուղիղ ազդեցություն ունեն նրա վրա, թե ինչպես է հարցը հասել դատարան (օրինակ՝ եթե ԿԸՀ-ն անձին ազատությունից զրկելու համաձայնություն տվել է պահանջվող ձայների համամասնությամբ խախտմամբ և այլն):

Խնդիրն էլ ավելի է սրվում, երբ հարցը դիտարկում ենք մարդու համար իր իրավունքների պաշտպանության համար իրավական միջոցների արդյունավետության ու, առհասարակ, դրանց հասանելիության տեսանկյունից: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է այն դեպքերին, երբ մարդը գտնում է, որ իր նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ համաձայնություն տալու որոշումը կայացրել ու այդ հարցի քննարկումն իրականացրել է, ասենք, իր անձնական ազատության, արդար դատաքննության երաշխիքների խախտմամբ և ցանկանում

վիճարկման միջոցով պաշտպանել իր իրավունքները: **Հարց է առաջանում, թե ուր կամ որ ատյան պետք է դիմի այդ անձը կամ նրա փաստաբանը: Իհարկե, առաջին հնարավորությունը պետք է լինի ընդհանուր իրավասության առաջին ատյանի այն դատարանը, որը ԿԸՀ-ի որոշումից հետո քննարկում է քրեական մարմնի միջնորդությունն անձին կալանավորելու վերաբերյալ: Ինչպես նշվեց, այս դատարանը, սակայն, որևէ կերպ չի անդրադառնում ԿԸՀ-ում անձի իրավունքների խախտման հարցին և դրանց հնարավոր ազդեցությանն իրեն ներկայացված քրեական հետապնդման մարմնի միջնորդության քննարկման վրա:**

**Հետաքրքիր է, որ փաստաբանները տեղեկացրել են, որ Վերաքննիչ քրեական դատարանում իրենք ևս բարձրացրել են պնդումներ առ այն, որ ԿԸՀ-ում ոտնահարվել են իրենց վստահորդների իրավունքները, սակայն այս դատարանը ևս այդ հարցին ընդհանրապես չի անդրադարձել՝ փակելով «թեման»:**

Փաստորեն, քրեական դատարանները փակում են ԿԸՀ-ում մարդու իրավունքների խախտման վերաբերյալ պնդումների հարցը՝ չմտնելով դրա մեջ՝ առհասարակ: Այն էլ դա տեղի է ունենում այն պայմաններում, որ ԿԸՀ-ի փուլը հաղթահարվել է մարդու համար անորոշության վիճակում: Այս պայմաններում մարդու իրավունքների պաշտպանության համար, ստացվում է, մնում է դիմել մեկ այլ դատական պաշտպանության միջոցի: Խոսքը վերաբերում է Վարչական դատարանին, եթե ղեկավարվում ենք այն իրողությամբ, որ ԿԸՀ-ում տեղի է ունենում վարչական վարույթ: Ըստ այդմ, օրինակ, փաստաբաններից մեկը Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքով տեղեկացրել է, որ ԿԸՀ-ի որոշումները բողոքարկել է Վարչական դատարան, սակայն այս դատարանը ևս քննարկման չի արժանացրել փաստաբանի բողոքը: **Մասնավորապես, կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ համաձայնություն տալու որոշման դեմ ներկայացված բողոքի կապակցությամբ, Վարչական դատարանը նշել է, որ վիճարկվող որոշումը չունի անձի նյութական իրավունքներին միջամտող ուղղակի իրավական հետևանքներ առաջացնող ունակություն, հետևապես չի կարող դառնալ դատական վերահսկողության առարկա<sup>8</sup>: Իսկ քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ համաձայնություն տալու որոշման դեմ ներկայացված բողոքի կապակցությամբ Վարչական դատարանը գտել է, որ «հայցվորն իր իրավունքների պաշտպանությունը չի կարող իրականացնել վարչական դատավարության կարգով, քանի որ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տված համաձայնությունը չի հանդիսանում վարչական ակտ, այն ընդամենը համապատասխան լիազոր մարմնի կողմից տրված համաձայնություն է պատգամավորի թեկնածուի վերաբերյալ քրեական հետապնդում իրականացնելու**

<sup>8</sup> Հասանելի է հետևյալ հղումով՝ [http://datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809962667](http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809962667), 2021 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ:

համար, ինչը չի նշանակում պատգամավորի թեկնածուին քրեական դատավարության կարգով պատասխանատվության ենթարկելու հիմքերի առկայության հաստատում և չի կաշկանդում իրավասու մարմնին համապատասխան հարցը օրենքով սահմանված կարգով լուծելիս, ինչպես նաև չի զրկում հայցվորին քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով իր իրավունքների պաշտպանությունն իրականացնելու հնարավորությունից<sup>9</sup>:

Վերոգրյալ որոշումը բողոքարկվել է Վերաքննիչ վարչական դատարան, որտեղ ևս վերաքննիչ բողոքը մերժվել է: Մասնավորապես, Վերաքննիչ վարչական դատարանը գտել է, որ «պատգամավորի թեկնածուի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը դատական վերահսկողության օբյեկտ չէ:

Ըստ այդմ՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ առկա է ներկայացված հայցադիմումի ընդունումը մերժելու ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված հիմք, այն է՝ հայցը ենթակա չէ դատարանում քննության:»<sup>10</sup>:

Վարչական դատարանների այս ֆորմալ տրամաբանության հիմքում կան որոշակի հանգամանքներ: Նախ, փաստաբանները ստիպված են գնացել վարչական դատարան, քանի որ քրեական դատարանները պարզապես հրաժարվել են իրենց վստահորդների իրավունքների դատական պաշտպանություն իրականացնել, բայց մյուս կողմից՝ ի՞նչ հանգամանքներ կարող են ազդել վարչական դատական ատյանի որոշման վրա: Նախ, ԿԸՀ-ի քրեական հետապնդում հարուցելու կամ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համաձայնություն տալու որոշման բողոքարկումը վարչական դատարան հասկանալիորեն չի կասեցնում քրեական վարույթը:

Այս ամենով ստացվում է, որ քրեական վարույթի որոշակի հատվածում հանրային իշխանության մարմնում՝ ԿԸՀ-ում, տեղի ունեցած գործընթացի (առանց ընթացակարգերի և մարդու համար անորոշ) և կայացված որոշման արդյունքում մարդու նկատմամբ հարուցվում է քրեական հետապնդում կամ նա կալանավորվում է, և այդ մարդը պնդում է, որ ԿԸՀ-ում խախտվել են իր իրավունքները, բայց նա որևէ ատյանում կամ որևէ տեղ չի կարողանում հասնել այդ պնդումների քննարկման: Դատական որևէ ատյան չի ընդունում, պարզապես հրաժարվում է լսել անձի բողոքները: Ստացվում է՝

<sup>9</sup> Հասանելի է հետևյալ հղումով՝ [http://datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809962665](http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809962665), 2021 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ:

<sup>10</sup> Հասանելի է հետևյալ հղումով՝ [http://datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=385620718099626652021](http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=385620718099626652021), թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ:

իրավունքի ինչ ոտնահարում էլ այստեղ տեղի ունեցավ, հնարավոր չի լինում որևէ տեղ վիճարկել: Այս պայմաններում ֆորմալ առկա միջոցները ոչ թե պարզապես դառնում են անարդյունավետ, այլ մարդու համար անհասանելի ու իրական իմաստով պատրանքային: Դատարանները հրաժարվում են իրավունքի պաշտպանություն իրականացնել: Ընդ որում, խոսքն էլ իրավունքների այնպիսի խախտումների վերաբերյալ պնդումների մասին է, որոնք, ըստ նշված անձանց կամ նրանց փաստարկների՝ բնույթով այնպիսին են, որ ազդելու էին ԿԸՀ-ի որոշումներից հետո սկսված գործընթացների վրա (քրեական հետապնդում, կալանավորում և այլն) և այդ գործընթացները դարձնելու էին ոչ իրավաչափ:

**Ողջ նկարագրվածից զատ, բացի այն, որ չկա որևէ ատյան, որտեղ անձը կարող է պաշտպանել իր իրավունքները, առկա վիճակը քրեական հետապնդման մարմնի համար ուղղակի առաջ է բերում իրական գայթակղություն առ այն, որ հնարավոր է կատարել մարդու իրավունքի նկատմամբ բարձր միջամտություն ենթադրող գործողություն առանց հիմնավորումների համար ռեսուրս գործադրելու կամ հասնել իր համար նվազագույն ռեսուրսներով: Իսկ հետո էլ դա կօգտագործվի որպես ձևական արդարացում՝ թաքնվելով երաշխիքի շղարշի ներքո:**

Շեղանաբար, ամրագրված ցանկացած երաշխիք պետք է լինի բովանդակային և իմաստավորված: Հակառակ իրավիճակը դառնում է ձեռնտու թե՛ տվյալ շեմը հաղթահարելուն կոչված և միջնորդություն ներկայացրած մարմնի, թե՛ այդ երաշխիքը ապահովելուն կոչված մարմնի համար: Իսկ կառուցակարգերի բացակայության պարագայում հօգուտ մարդու վերջինի իրավական պարտավորվածության սահմաններն ուղղակի վերանում են:

Ուստի, վարույթն իրականացնող մարմնի միջնորդության քննարկումը պետք է իրականացվի ընթացակարգային հստակ կանոնների առկայությամբ: Կանոններն ու, առհասարակ, վարույթային ընթացակարգերն էլ հենց նախատեսված են, որպեսզի մարդու համար լինեն երաշխիքներ: Հակառակ պարագայում՝ առանց այդ երաշխիքների իրականացվող վարույթը և դրանց արդյունքում որոշումները հանգեցնում են մարդու սահմանադրական իրավունքների ոտնահարման հետագայում ևս:

Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան նույն հոդվածով սահմանված դեպքերում և օրենքով սահմանված կարգով:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածը ևս երաշխավորում է ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը՝ 1-ին մասով սահմանելով, որ յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի

ազատությունից զրկել այլ կերպ, քան նույն հոդվածով սահմանված դեպքերում և օրենքով սահմանված կարգով:

Մարդու անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը կյանքի և ազատության բնական իրավունքներից ածանցված, պետության կողմից ճանաչված, նրա ֆիզիկական ազատությունն արտահայտող հնարավորությունն է: Մարդու բնական ազատությունն ամենից առաջ վերաբերում է նրա անձին: Անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքին առանձնահատուկ նշանակություն տալը բնական է, քանի որ այդ իրավունքի սահմանափակումը հանգեցնում է Սահմանադրությամբ վերապահված մի շարք այլ իրավունքների սահմանափակման (ազատ տեղաշարժվելու, բնակավայր ընտրելու իրավունք և այլն)<sup>11</sup>:

Մարդու անձնական ազատության իրավունքի սահմաններն իրավական նշանակություն ունեն նաև պետության գործառույթների բովանդակությունն ու շրջանակը կանխորոշելու առումով: Պետությունը պարտավոր է ոչ միայն հարգել անձնական ազատության իրավունքը, ձեռնպահ մնալ այն որևէ կերպ խախտելուց, այլ պաշտպանել այն և պատասխանատու լինել դրա համար<sup>12</sup>:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով երաշխավորված այս իրավունքին բազմիցս անդրադարձ է կատարել Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ ձևավորելով հստակ դիրքորոշում, ըստ որի՝ **երբ խնդիրն առնչվում է ազատությունից զրկելուն, հատկապես կարևոր է պահպանել իրավական որոշակիության ընդհանուր սկզբունքը**: Ուստի, խիստ կարևոր է, որ ներպետական օրենսդրությամբ ազատությունից զրկելու պայմանները հստակորեն սահմանված լինեն, և որ օրենքի կիրառության շրջանակը կանխատեսելի լինի: Միայն այս դեպքում ազատությունից զրկելը կհամապատասխանի Կոնվենցիայով նախատեսված «օրինականության» պահանջին<sup>13</sup>:

Եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասը չի վերաբերում միայն ներպետական օրենսդրությանը, այն վերաբերում է նաև «օրենքի որակին»: Այս իմաստով «օրենքի որակը» նշանակում է, որ այն դեպքում, երբ ազգային օրենքը թույլատրում է անձին ազատությունից զրկել, ապա այն պետք է լինի բավականաչափ մատչելի, հստակ և **կիրառության առումով**

<sup>11</sup> Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ: «Իրավունք», 2010թ., էջ 187: Հասանելի է <https://www.concourt.am/armenian/library/cclibrary/2010/sahmanadrakan2010.pdf> հղումով:

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 189:

<sup>13</sup> Տե՛ս Խլաիֆիան և Ուրիշներն ընդդեմ Իտալիայի (Khlaifia and Others v. Italy) գործով 2016 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 16483/12, կետ 92: Քրեանգան ընդդեմ Ռումինիայի (Creangă v. Romania) գործով 2012 թվականի փետրվարի 23-ի վճիռը, գանգատ թիվ 29226/03, կետ 120: Մեդվեդևը և Ուրիշներն ընդդեմ Ֆրանսիայի (Medvedyev and Others v. France) գործով 2010 թվականի մարտի 29-ի վճիռը, գանգատ թիվ 3394/03, կետ 80: Ջեշիուսն ընդդեմ Լիտվայի (Jėčius v. Lithuania) գործով 2000 թվականի հուլիսի 31-ի վճիռը, գանգատ թիվ 34578/97, կետ 56 և այլն:

կանխատեսելի, որպեսզի հնարավոր լինի խուսափել կամայականության դրսևորման բոլոր ռիսկերից<sup>14</sup>:

Փաստորեն, քրեական հետապնդում հարուցելու կամ անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությունը ստանալու կառուցակարգերի բացակայության պայմաններում մարդը որևէ հնարավորություն չունի կողմնորոշվելու՝ իր նկատմամբ քրեական հետապնդում հարուցվելու դեպքում իրավական ի՞նչ նորմեր են կիրառվելու, ի՞նչ ընթացակարգով, ի՞նչ երաշխիքների գործադրմամբ: Ավելին, փորձը ցույց է տալիս, որ գործնականում դրանք կարող են կանխորոշել, որ որևէ երաշխիք էլ չի գործադրվում և որևէ ընթացակարգ էլ չկա, այսինքն՝ գործընթացը բովանդակային կամ իմաստավորված չէ և ձևական է: Թերևս, ավելի մտահոգիչ է այն, որ նման պայմաններում որոշում կայացնող մարմնում ընթացակարգն անկանխատեսելի է մարդու համար ու այն էլ խոսքն այնպիսի մարմնի մասին է, որ չունի մասնագիտական հմտություններ, իհարկե, խնդրահարույց է նրա իրավունքների հնարավոր խախտումները բացառելու անկարողության տեսանկյունից: Սա էլ բերում է նրան, որ գործընթացը դառնում է քրեական հետապնդման մարմնի համար կանխորոշված՝ իրեն ձեռնտու ելքով: Այս արատավոր շղթան էլ եզրափակվում է նրանով, որ գոյություն չունի որևէ ատյան, որտեղ մարդը կարող է ներկայացնել իր իրավունքների խախտումների մասին պնդումները, հասնել դրանց արդյունավետ քննարկման ու այդ կերպ պաշտպանվել քրեական հետապնդման մարմինների՝ իր իրավունքների միջամտող արարքներից:

---

<sup>14</sup> Տե՛ս Ջ. Ն.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (J. N. v. United Kingdom) գործով 2016 թվականի օգոստոսի 19-ի վճիռը, գանգատ թիվ 37289/12, կետ 77: Նասրուլլոյևն ընդդեմ Ռուսաստանի (Nasrulloev v. Russia) գործով 2008 թվականի հունվարի 11-ի վճիռը, գանգատ թիվ 656/06, կետ 71 և այլն:



#### **Գլուխ 4. Արդար դատաքննության ու մեղադրանքից պաշտպանվելու իրավունքների ապահովումը և ԿԸՀ ընթացակարգերի ու որոշումների նշանակությունը**

Արդար դատաքննության իրավունքը մարդու հիմնարար և կարևորագույն իրավունքներից է: Առաջին հայացքից «արդար դատաքննության» անվանումը իրավունքի իրացման տիրույթը արդարադատություն իրականացնող մարմինն է՝ դատարանը, սակայն միջազգային, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս իրավունքն ունի բարդ և բազմակողմանի կառուցակարգ և տարածման շատ ավելի լայն տիրույթ:

Քննարկման կարևոր հարց է այն, թե արդյոք արդար դատաքննության իրավունքը կիրառելի է քրեական դատավարության սուբյեկտ և դատարան չհանդիսացող այնպիսի մարմնի նկատմամբ, որն օժտված է անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ ազատությունից զրկելու համաձայնություն տալու իրավասությամբ:

Այս իմաստով, անհրաժեշտ է, նախ, քննարկել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական չափանիշները, որոնք հիմնականում հանգում են հետևյալին.

- վեճը քննող այս կամ այն կարգապահական կամ վարչական մարմինը, նույնիսկ եթե չի կոչվում «դատական ատյան» կամ «դատարան», սակայն ունի վերջիններիս բնորոշ հատկանիշներ եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի ինքնավար նշանակության շրջանակներում<sup>15</sup>,

- հարկավոր չէ, որ ատյանը սովորական դատական «մեխանիզմի» մաս կազմի, և այն փաստը, որ տվյալ ատյանը բացի դատականից նաև այլ գործառույթներ ունի, ոչ միշտ է նրան դուրս բերում «դատարան» հասկացության շրջանակից<sup>16</sup>,

- ելակետային է այն մարմնի գործառույթ, որը որոշում պետք է կայացնի իր իրավասության շրջանակներում՝ ելնելով իրավունքի գերակայության սկզբունքից<sup>17</sup>,

- մարմինը պետք է որոշումների կայացման համապատասխան իրավասություն ունենա<sup>18</sup>:

Ասվածը հաշվի առնելով՝ մենք ունենք իրավիճակ, երբ պետության ստեղծած մարմինը, կոնկրետ դեպքում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի քրեական հետապնդում հարուցելու կամ ազատությունից զրկելու համաձայնություններով քրեական դատավարություն իրականացնող մարմինների համար բացվում է անձի

<sup>15</sup> Տե՛ս Հ-ն ընդդեմ Բելգիայի (H. v. Belgium) գործով 1987 թվականի նոյեմբերի 30-ի վճիռը, գանգատ թիվ 8950/80, կետ 50-55:

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղում

<sup>17</sup> Տե՛ս Բելիլոսն ընդդեմ Շվեյցարիայի (Belilos v. Switzerland) գործով 1988 թվականի ապրիլի 29-ի վճիռը, գանգատ թիվ 10328/83, կետ 62-73:

<sup>18</sup> Տե՛ս Սրամեկն ընդդեմ Ավստրիայի (Sramek v. Austria) գործով 1984 թվականի հոկտեմբերի 22-ի վճիռը, գանգատ թիվ 8790/79, կետ 36-42:

իրավունքների և շահերի նկատմամբ քրեաիրավական միջամտությունների ճանապարհ (խափանման միջոցներ, ներգործության այլ միջոցներ):

Ակնհայտ է, որ այս պայմաններում պետական մարմնի՝ քրեական հետապնդում հարուցելու կամ ազատություն զրկելու համաձայնություն տալու գործառույթն ուղղակիորեն պահանջում է արդար դատաքննության երաշխիքների կիրառում: Խոսքը վերաբերում է մրցակցությանը, կողմերի իրավահավասարությանը, արդյունավետ մասնակցությանը և այլն:

Պետք է նաև հաշվի առնել, որ հենց քրեական դատավարության այս կոնկրետ հատվածում է անձին պետությունն առաջին անգամ տեղեկացնում, որ նրա նկատմամբ պատրաստում է սկսել հետապնդում, քանի որ ունի Քրեական օրենսգրքի այս կամ այն հոդվածով նախատեսված արարքին նրա առնչությանը վկայող ապացույցներ: Ակնհայտ է, որ խոսքը հանցագործության համար մարդուն մեղադրելու մասին է:

ՀՀ սահմանադրությամբ է ամրագրված, որ հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրավունք: Այսինքն, Սահմանադրության մակարդակով այս իրավունքը պետք է ապահովվի ցանկացած կարգավորման ու մեխանիզմի պարագայում՝ անկախ նրանից, թե որ մարմնի հետ է դա կապված:

Հասկանալի է, որ այստեղ չենք կարող հարցերը քննարկել ֆորմալ մոտեցմամբ ու դրա հետ էլ կապել մարդու իրավունքների հարցը: Օրինակ՝ չի կարելի այս հարցը կապել «մեղադրյալ» հասկացության այնպիսի նեղ մեկնաբանության և այլ սուբյեկտի առաջ գալու ֆորմալ պահի հետ, որ ամրագրված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում: Հարցը պետք է, նախևառաջ, դիտարկել սահմանադրաիրավական ինքնավար հասկացությունների տեսանկյունից, որ բխում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից:

Այսպես, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հիման վրա «քրեական մեղադրանք» հասկացությունը պետք է հասկացվի ոչ թե ձևական (փաստաթղթային), այլ բովանդակային (գործնական) իմաստով<sup>19</sup>: Այսինքն՝ անձի նկատմամբ «մեղադրանքի» առկայության մասին կարող է վկայել նաև այնպիսի միջոցներ ձեռնարկելը, որոնք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն, ինչպես նաև էականորեն ներգործում են կասկածվող անձի դրության վրա<sup>20</sup>:

<sup>19</sup> Տե՛ս Դեվեերն ընդդեմ Բելգիայի (Deweere v. Belgium) գործով վճիռ, 1980թ. փետրվարի 27, գանգատ թիվ 6903/75, կետ 44):

<sup>20</sup> Տե՛ս Էկլեն ընդդեմ Գերմանիայի (Eckle v. Germany) գործով 1982 թվականի հուլիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 8130/78, կետ 73: Շուբինսկին ընդդեմ Սլովենիայի (Šubinski v. Slovenia) գործով 2007 թվականի հունվարի

«Քրեական մեղադրանք» հասկացությունն ունի «ինքնուրույն» նշանակություն, կախված չէ անդամ պետությունների իրավական համակարգերում կիրառվող դասակարգումներից<sup>21</sup>: Այն կարող է սահմանվել իբրև «իրավասու մարմնի կողմից անձին՝ ենթադրաբար նրա կողմից կատարված քրեական հանցանքի մասին ներկայացված պաշտոնական ծանուցում»<sup>22</sup>:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի երեք պարբերություններում օգտագործվող «քրեական մեղադրանք» և «քրեական հանցանքի կատարման մեջ մեղադրվող» եզրույթները վերաբերում են նմանատիպ իրավիճակների: Օրինակ՝ 6-րդ հոդվածի 2-րդ կետի շրջանակներում ներկայացվող և դատավարության համատեքստում առաջ եկող ցանկացած գանգատ գնահատելիս անհրաժեշտ է նախևառաջ պարզել՝ արդյոք վիճարկվող դատավարությունը ներառել է Դատարանի նախադեպային իրավունքի իմաստով «քրեական մեղադրանքի» որոշման հարցը<sup>23</sup>:

Վերոգրյալից բացի, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի դրույթները մեղադրյալին իրավունք են վերապահում տեղեկացված լինելու ոչ միայն մեղադրանքի համար առիթ հանդիսացած նյութական փաստերի մասին, այլ նաև այդ փաստերի մանրամասն իրավական որակման մասին<sup>24</sup>:

Եվրոպական դատարանի դիրքորոշմամբ՝ ներկայացված մեղադրանքի, հետևաբար՝ դատարանի կողմից դրա հնարավոր իրավական որակման մասին մեղադրյալի ճշգրիտ և լրիվ տեղեկացումը քրեական դատավարությունում արդար դատաքննության էական նախապայման է<sup>25</sup>:

Եվ ի վերջո, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի մասով բերված բողոքներով Եվրոպական դատարանը գտել է, որ մեղադրանքի բնույթի և առիթների մասին տեղեկացված լինելու իրավունքը պետք է դիտել պաշտպանության նախապատրաստության իրավունքի լույսի ներքո<sup>26</sup>:

---

18-ի վճիռ, գանգատ թիվ 19611/04, կետ 62; Գ.Կ.-ն ընդդեմ Լեհաստանի (G.K. v. Poland) գործով 2004 թվականի հունվարի 20-ի վճիռը, գանգատ թիվ 38816/97, կետ 98; Գագիկ Միքայելյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԴԴ/0085/06/09 որոշման 21-րդ կետը:

<sup>21</sup> Տե՛ս՝ Ադոլֆն ընդդեմ Ավստրիայի (Adolf v. Austria) գործով վճիռ, 1982 թվականի մարտի 26, գանգատ թիվ [8269/78](#), կետ 44:

<sup>22</sup> Տե՛ս Դեվեերն ընդդեմ Բելգիայի (Deweere v. Belgium) գործով վճիռ, 1980թ. փետրվարի 27, գանգատ թիվ 6903/75, կետ 42 և 46:

<sup>23</sup> Տե՛ս՝ Ալլեն ընդդեմ Միացյալ Թագավորության (Allen v. The United Kingdom) գործով վճիռ, 2010 թվականի մարտի 30, գանգատ թիվ 18837/06, կետ 95:

<sup>24</sup> Տե՛ս՝ Պելիսյեն և Սասին ընդդեմ Ֆրանսիայի (Pelissier and Sassi v. France) գործով վճիռ, 1999 թվականի ապրիլի 25, գանգատ թիվ 25444/94, կետ 51:

<sup>25</sup> Տե՛ս նույն տեղում, կետ 52:

<sup>26</sup> Տե՛ս՝ Պելիսյեն և Սասին ընդդեմ Ֆրանսիայի (Pelissier and Sassi v. France) գործով վճիռ, 1999 թվականի ապրիլի 25, գանգատ թիվ 25444/94, կետ 54:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ հստակ է, որ անձի՝ մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը ենթակա է եղել իրացման այն ժամանակ, երբ ԿԸՀ-ն քննարկել է վերջինիս նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ համաձայնություն տալու միջնորդությունները, քանի որ վարույթն իրականացնող մարմինն իր գործողություններով փաստել է հանցագործության մեջ կասկածանքի առկայության, իսկ միջնորդությունների ներկայացմամբ՝ այդ անձի դրության վրա էականորեն ներգործելու մասին:

Ինչպես վկայում են բոլոր այն պատգամավորների կամ պատգամավորների թեկնածուների հետ Մարդու իրավունքների պաշտպանի ու աշխատակազմի առանձնագրույցները, ում նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ ընտրական օրենսգրքի 90-րդ հոդվածի գործադրմամբ, քրեական հետապնդում իրականացնող մարմինների միջնորդությունների բովանդակության՝ ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին տեղեկացված չեն եղել: Այս մասին են վկայում նաև նրանց բոլորի փաստաբանների պնդումները, ինչպես նաև նյութերի ուսումնասիրությունը:

Նույնը վերաբերում է նաև կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ համաձայնություն տալու միջնորդությանը:

**Ավելին, Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքներն այն մասին են, որ անձինք, ում վերաբերյալ ներկայացված է միջնորդություն կամ նրանց պաշտպանները ԿԸՀ վարույթի և քննարկվող հարցի մասին տեղեկանում են տեղում, երբ լսում են միջնորդությունը կամ ժամանակ են խնդրում ծանոթանալու համար գործի նյութերին, կամ քննարկվող հարցի վերաբերյալ մոտավոր պատկերացում են կազմած լինում մամուլի կամ սոցիալական ցանցերի հրապարակումներից: Սա սկզբունքորեն անթույլատրելի վիճակ է:**

Այստեղ գլխավոր հարցն է, որ, փաստորեն, արդար դատաքննության հիմնարար բաղադրիչները, որոնց վրա այն հիմնված է, ամբողջությամբ զրոյացվում են: Մինչդեռ, հենց այս փուլում պետք էր դրանք հատկապես ապահովել, քանի որ խոսքը գնում է մարդու կողմից իր նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ ազատությունից զրկելու մտադրության ու հիմքերի մասին տեղեկացվելուն:

Պարզաբանման կարիք ունի ևս մեկ հարց. արդյոք ԿԸՀ-ն քրեական դատավարության մասնակից է և հանրային իշխանության այդ մարմնի վրա պետք է հավասարապես տարածվեն այն նույն պահանջները, ինչ ամրագրված են քրեական վարույթ իրականացնող մարմինների համար:

Իհարկե, Մարդու իրավունքների պաշտպանը հստակ գիտակցում է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը քրեական դատավարության մասնակից կամ քրեական վարույթն իրականացնող մարմին համարվել չի կարող: Այն նաև

նախատեսված չէ քրեական դատավարության մասնակիցների կամ քրեական վարույթն իրականացնող մարմինների թվում:

Հետևաբար, իհարկե, հնարավոր էլ չէ ԿԸՀ-ի, այդ թվում՝ այդ մարմնում վարույթի, ԿԸՀ անդամների կողմից քրեական հետապնդման մարմնի միջնորդությունների ուսումնասիրության նկատմամբ ներկայացնել այն նույն պահանջները, ինչ կիրառվում է քրեադատավարական գործառույթներ իրականացնող մարմնի (օրինակ՝ դատարան) նկատմամբ: Բայց քրեական դատավարության մասնակից կամ քրեական վարույթ իրականացնող մարմին չհանդիսանալը կամ այդ մարմինների թվում չլինելը չի նշանակում, թե քրեական հետապնդում հարուցելու կամ կալանավորելու համաձայնություն տալու հարցերը քննելիս ԿԸՀ-ի նկատմամբ պահանջներ ներկայացվել չեն կարող, առհասարակ:

Հարցն այն է, որ կոնկրետ իրավիճակում պետք է ելնել նրանից, որ այս մարմնում քննարկվում են քրեական հետապնդման մարմնի միջնորդություններով ներկայացված հարցեր, որոնք առաջ են եկել քրեական գործով վարույթի ընթացքում և այդ հարցերի կապակցությամբ ԿԸՀ որոշումներից է կախված քրեական վարույթի ընթացքը և անգամ քրեական գործի ճակատագիրը:

Ընդ որում, եթե կալանավորելու համաձայնություն չտալու դեպքում քրեական հետապնդման մարմնի «ռիսկն» այն է, որ մարդը կարող է մնալ ազատության մեջ, ապա քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն չտալու դեպքում վարույթի հետագա ընթացքը կարող է ընդհանրապես իմաստազրկվել: Այսինքն՝ վերջին պարագայում կստացվի քրեական վարույթն ուղղակի պետք է դադարեցնել:

Ակնհայտ է, որ քրեական հետապնդման մարմնի համար նման սկզբունքային կարևորության հարցի քննարկման ժամանակ մեծ է լինելու ճնշումը ԿԸՀ-ի նկատմամբ հենց առաջին հերթին քրեական հետապնդման մարմնի կողմից:

Օրինակ՝ այս հարցերի քննության ժամանակ քրեական հետապնդման մարմինը, հղում կատարելով նախաքննության գաղտնիքին, թույլ չի տալիս, որ ԿԸՀ-ն նյութերը տրամադրի նաև փաստաբաններին ու նրանց փաստաբաններին: Դրանից բացի, ԿԸՀ-ն չի կարողանում ապահովել իր կողմից քրեական հետապնդման մարմնի միջնորդության քննություն հրապարակայնության պայմաններում դարձյալ այն պատճառով, որ նախաքննության մարմինը, հղում անելով նախաքննության գաղտնիքին, թույլ չի տալիս դա անել: Մյուս կողմից՝ հարց է առաջանում, թե ինչպես ԿԸՀ-ն իրականացնի, օրինակ, կալանքի հիմքերի ուսումնասիրություն, երբ միջնորդությունը հիմնված է վկաների ցուցմունքների վրա, իսկ հետապնդման մարմինը պնդում է, որ ԿԸՀ-ն դրանց ուսումնասիրություն իրականացնել չի կարող: Բայց մյուս կողմից էլ փաստաբաններն են պնդում, որ միջնորդություններն անհիմն են և ենթակա են մերժման: Խնդրահարույց է ժամկետների հարցը, հատկապես, երբ

հաշվի ենք առնում, որ քննարկվող միջնորդությունները քննարկվում են նախընտրական քարոզչության ծանրաբեռնված ու ԿԸՀ-ի համար խիստ լարված ժամանակ:

Իսկ եթե հաշվի առնենք, որ Ընտրական օրենսգրքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի դեպքում միշտ լինելու է պատգամավորների թեկնածուների՝ մինչև պատգամավորների լիազորությունները ստանձնելն ընտրված պատգամավորների մասին, ապա ակնհայտ է, որ գործ ունենք նաև քաղաքական զգալի բաղադրիչի հետ: Սա էլ իր հերթին նշանակում է, որ օբյեկտիվորեն մեծ է լինելու նաև հարցի հանրային քաղաքական, այդ թվում՝ առաջնահերթ գործադիր իշխանության ճնշումը:

Վերջապես, չպետք է մոռանալ, որ այստեղ կա նաև հանրային շահերի հարց այն առումով՝ արդյոք իրականում ճիշտ էր մարդու նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու թույլտվություն կամ կալանավորելու համաձայնություն տալը: Չէ՞ որ օրենսդիրը պատահական չի նախատեսել նման կառուցակարգ:

Հանրային շահի խնդիր է նաև այն, որ ԿԸՀ-ն, որը կազմակերպում է Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, հանրաքվեները, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում դրանց օրինականության նկատմամբ, առանց իր համար երաշխիքների, իրականացնում է իրեն ոչ բնորոշ գործառույթներ: Վերջիններն առանց ընթացակարգերի նախատեսելու դեպքում ԿԸՀ-ն դնում են հիմնական գործառույթները վտանգելու սպառնալիքի առաջ:

Բերենք օրինակ՝ պատկերացնելու համար գործնական պատկերը. նախընտրական քարոզչության ընթացքում ներկայացվում են միջնորդություններ այս կամ այն կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի ցուցակով ընտրական գործընթացի մասնակցող անձանց՝ պատգամավորի թեկնածուների նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրանց նկատմամբ կալանավորելու համաձայնություն ստանալու միջնորդություններ: Այստեղ պետք է հիշել, որ ընտրական գործընթացի այդ մասնակիցները ընտրական գործընթացին մասնակցում են՝ իրացնելով Սահմանադրությամբ նախատեսված և միջազգայնորեն երաշխավորված իրենց քաղաքական իրավունքները (օրինակ՝ ընտրվելու, պետության կառավարմանը մասնակցելու իրավունքներ և այլն): Քրեական հետապնդման մարմինն էլ ԿԸՀ-ին ներկայացնում է նշված միջնորդություններից որևէ մեկը՝ հրապարակային հայտարարելով, որ իրականացնում է ընտրական հանցագործությունների, այդ թվում՝ ընտրակաշառքների կամ ընտրողների նկատմամբ ապօրինի ճնշումներ գործադրելու դեմ պայքար: Իհարկե, այս երևույթներն արատավոր են և պետք է ի սկզբանե արմատախիլ արվեն: Բայց, իրավական առումով նման պայմաններում քրեական հետապնդման մարմնի միջնորդությունը մերժելու դեպքում ստացվելու է ԿԸՀ-ն թույլ չի

տալիս, որպեսզի քրեական քաղաքականությունն իրացվի նման արատավոր, քրեորեն պատժելի արարքների դեմ պայքարում: Այս դեպքում անգամ անմեղության կանխավարկածը չի կարող նշանակություն ունենալ: Մյուս կողմից, ինքը ԿԸՀ-ն կոչված լինելով հենց այդ թեկնածուների համար նաև ստեղծել ընտրությունների մասնակցության օրինական պայմաններ՝ հայտնվում է խնդրահարույց վիճակում:

Այս ամենի բացասական ազդեցությունն էլ իհարկե առաջնահերթ տեղի է ունենում մարդու իրավունքների վրա՝ հանգեցնելով նրա վերաբերյալ որոշումների մեխանիկական բավարարման՝ զերծ մնալու համար նկարագրված խնդիրներից:

**Հետևաբար, ակնհայտ է, որ նման ճնշումներին հակազդելու, դրանք հակակշռելու և նկարագրված խնդիրները չեզոքացնելու համար անհրաժեշտ են ԿԸՀ-ում նշված հարցերի քննարկման կոնկրետ ընթացակարգեր, հստակ կանոններ:**

Այլ կերպ ասած, ստեղծված իրավիճակում առաջ է գալիս եռակողմ իրավաչափ շահերի ապահովման խնդիր:

Առաջինը վերաբերում է ԿԸՀ-ի համար կոնկրետ ընթացակարգեր սահմանելուն: Սա առաջին հերթին անհրաժեշտ է ԿԸՀ-ին նկարագրված ճնշումներից, որոնք արգելված են օրենքով, պաշտպանելու համար:

Երկրորդ, դա անհրաժեշտ է նրա համար, որ ԿԸՀ-ն չունենա որևէ կաշկանդվածություն և ի վիճակի լինի ստեղծել պայմաններ անձի իրավունքների պատշաճ իրականացման համար: ԿԸՀ-ն պետք է նաև ուսումնասիրի այդ ընթացակարգի շրջանակում միջնորդություններն այն չափով, որ հնարավոր լինի նվազագույն պայմաններով ապահովել անձի իրավունքները:

Եվ վերջապես, երրորդ, այստեղ ակնհայտորեն գործ ունենք հանրային շահի պաշտպանության հետ: Հարցն այն է, որ հանրային շահը չի նշանակում, թե ԿԸՀ-ն պետք է կուրորեն կամ մեխանիկորեն բավարարի քրեական հետապնդման մարմնի միջնորդությունները: Ընդ որում, այսօր գործնականում այդպես էլ տեղի է ունենում. ԿԸՀ-ն բավարարում է քրեական հետապնդման մարմնի բոլոր միջնորդությունները՝ արդարացումով, որ ոչ մասնագիտական մարմին է, անդամները չունեն մասնագիտական հմտություններ, չկա ընթացակարգ, հետևաբար չի կարող հարցերի մեջ «խորանալ» ու մերժել այդ միջնորդությունները: Ակնհայտ է, որ նման մեկնաբանությամբ ուղղակիորեն նենգափոխվում է հանրային շահի բովանդակությունը. հանրային շահ չի նշանակում քրեական հետապնդման մարմնի ցանկությունների մեխանիկական բավարարում և մարդու իրավունքների անտեսում: Հենց այս հիմնարար մոտեցումն է, որ հարց է առաջացնում. ինչու՞ ԿԸՀ-ն նույն սկզբունքների պայմաններում չի մերժում քրեական հետապնդման մարմնի միջնորդությունները, եթե ֆորմալ հիմքերով մոտենալով բավարարում է, ապա նույն տրամաբանությամբ պետք է նաև մերժի դրանք. միգուցե, իրականում այդ

**միջնորդություններն անհիմն են: Եթե հաշվի ենք առնում, որ այն, ինչ այստեղ տեղի է ունենում, հետագայում մարդը չի կարողանում որևէ տեղ վիճարկել կամ հասնել գոնե իրեն լսելուն, ապա այս հարցն առավել արդիական է դառնում: Վերջապես, հանրային շահից է բխում ընտրական գործընթացի մասնակիցների դերի հստակեցումը՝ ընտրությունների նկատմամբ վստահության ամրապնդման նկատառումով:**

Այսպիսով, անհայտ է, որ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և կալանավորելու համաձայնություն տալու հարցեր, պարտավոր է ապահովել անձի իրավունքների և առաջնահերթ՝ արդար դատաքննության երաշխիքների հասանելիությունն ու դրանց իրական լինելը: Վերը նշվածից յուրաքանչյուր շեղում կարող է հանգեցնել սահմանադրական իրավունքների խախտման: Ստացվում է, որ կարգավորումների բացակայության պատճառով վարույթն իրականացնող մարմնի կողմից ձևավորվում է այնպիսի պրակտիկա, որը չի ապահովում մարդու սահմանադրական իրավունքները:



## **Գլուխ 5. Լսված լինելու իրավունքը և ԿԸՀ որոշման պատճառաբանվածությունը կարգավորումների բացակայության պայմաններում**

Հանրային իշխանության մարմինների յուրաքանչյուր որոշում, որ առնչվում է մարդու իրավունքներին պետք է լինի պատճառաբանված: Այն պետք է լինի հստակ, մարդու համար պարզ ու հասկանալի և հիմնավորված (grounded): Այս պահանջներն առավել ևս խիստ են քրեական դատավարությունում և հատկապես, երբ կոնկրետ դեպքում խոսքը մարդուն ազատությունից զրկելու կամ նրա նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն տալու մասին է:

Մարդը պետք է հնարավորություն ունենա հասկանալու իր վերաբերյալ որոշման էությունը: Վերջինիս համար պետք է անորոշ չլինեն, թե ինչ փաստական հանգամանքներ են դրվել կայացված որոշման հիմքում, և ինչպես ու ինչ չափանիշների վրա է այս կամ այն որոշումը կայացվել: Այդ փաստական հանգամանքները պետք է լինեն բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկված՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Այս պահանջները պատահական չեն, դրանք մարդու կողմից իր իրավունքների պաշտպանության կարևոր նախադրյալ են: Մասնավորապես, թե՛ քրեական հետապնդում հարուցելու, թե՛ ազատությունից զրկելու համաձայնության որոշումներով է մարդը պատկերացում կազմում, թե կոնկրետ ինչի հիման վրա է կայացվել այդ որոշումը, ինչպես ինքը կամ իր փաստաբանը պետք է կառուցեն իրենց հետագա պաշտպանությունը, ինչ տակտիկա ընտրեն, կամ համաձայնվեն, թե չհամաձայնվեն որոշման փաստարկների հետ և այլն: Յուրաքանչյուր գործ անհատական է և ունի առանձնահատկություններ:

Որոշման հիմնավորումները նաև ցույց են տալիս, թե ինչ աստիճանի է հարցն ուսումնասիրված որոշում կայացնող մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից, ինչ աստիճան են քննարկվել ու ինչ նշանակություն են ունեցել անձի փաստարկները և այլն: Ի վերջո, հիմնավորված որոշումները մարդու նկատմամբ ձեռնարկվող գործողությունները դարձնում են կանխատեսելի:

Կարևոր է նաև ընդգծել, որ Ընտրական օրենսգրքում այս պահանջները ամրագրված են որպես երաշխիք: Սա ինքնին նշանակում է, որ ամրագրված լինելու փաստի ուժով բոլոր այն քաղաքացիների համար, որոնք որոշում են օգտվել իրենց սահմանական քաղաքական իրավունքներից, կանխատեսելի է մեկ հստակ բան. իրենց համար դա ապահովելու է իրենց արդար դատաքննության ու ազատության իրավունքների լրացուցիչ երաշխիք:

Քննարկող հարցերով ԿԸՀ քննարկվող բոլոր որոշումների ուսումնասիրությամբ պարզվել է, որ դրանք ներառում են միայն փաստական հանգամանքների ֆորմալ, այն էլ

համառոտ վկայակոչում, կալանքը որպես խափանման միջոց ընտրելու համաձայնություն տալու մասին միջնորդություն ներկայացրած անձի, նիստի մասնակիցների վերաբերյալ նշումներ, ինչպես նաև իրավական նորմի ֆորմալ վկայակոչում: Այդ որոշումները վկայում են, որ դրանք չունեն պատճառաբանական մասեր, այդ որոշումներում չկան փաստարկումներ, հիմնավորումներ կամ վերլուծություններ, պնդումներ կամ հերքումներ: Որոշումները չեն տալիս որևէ պատկերացում, թե ինչպես է քրեական վարույթ իրականացնող մարմինը հիմնավորում իր դիրքորոշումը ու ինչպես է պաշտպանության կողմը պաշտպանվելու կամ առհասարակ պաշտպանվելու է: Այդ ակտերում բացակայում է ԿԸՀ դիրքորոշումը, թե ինչու է ԿԸՀ-ն բավարարել միջնորդությունը: Ավելին, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն ուսումնասիրել է բոլոր որոշումները և պարզել, որ դրանք բոլորը տիպային են, չեն արտացոլում գործերի փաստերի առանձնահատկությունները:

Այս անընդունելի վիճակի պատճառներից է այն, որ ԿԸՀ-ում տեղի ունեցող գործընթացում չեն գործում կողմերի հավասարությունը, մրցակցությունը, լսված լինելը երաշխավորող սկզբունքները:

Այսպես, կողմերի հավասարության սկզբունքը՝ որպես Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր, պահանջում է, որ յուրաքանչյուր կողմից ողջամիտ հնարավորություն տրվի իր գործը , ներառյալ՝ ապացույցները) ներկայացնելու այնպիսի պայմաններում, որոնք հակառակորդի համեմատությամբ նրան էականորեն անբարենպաստ վիճակում չեն դնի<sup>27</sup>: Արդարադատության իրականացման նկատմամբ դատավարության մասնակիցների վստահությունը հիմնվում է այն գիտակցման վրա, որ իրենց տրվել է գործում առկա բոլոր փաստաթղթերի վերաբերյալ իրենց կարծիքներն արտահայտելու հնարավորություն<sup>28</sup>: «Ձենքերի հավասարությունն» անհրաժեշտ է ընկալել ոչ միայն դատավարական միջոցների օգտագործման հարցում հավասարության, այլև դրանցից օգտվելու պայմանների ապահովման առումով:

Սահմանադրական դատարանի 2007 թվականի հուլիսի 24-ի թիվ ՍԴՈ-710 որոշմամբ արտահայտված դիրքորոշման համաձայն՝ չնայած նրան, որ դատաքննության

<sup>27</sup> Տե՛ս Դոմբո Բիհիր Բ. Վ. Ընդդեմ Նիդերլանդների (Dombo Beheer B. V. v. The Netherlands) գործով 1993 թվականի հոկտեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 14448/88, կետ 33: Կրեսսն ընդդեմ Ֆրանսիայի (Kress v. France) գործով 2001 թվականի հունիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 39594/98, կետ 72: Հենտրիչն ընդդեմ Ֆրանսիայի (Hentrich v. France) գործով 1994 թվականի սեպտեմբերի 22-ի վճիռը, գանգատ թիվ 13616/88, կետ 56: Նիկոլովան և Վանդովան ընդդեմ Բուլղարիայի (Nikolova and Vandova v. Bulgaria) գործով 2014 թվականի մարտի 17-ի վճիռը, գանգատ թիվ 20688/04, կետ 91: Մատիյեկն ընդդեմ Լեհաստանի (Matyjek v. Poland) գործով 2007 թվականի սեպտեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 38184/03, կետ 55:

<sup>28</sup> Տե՛ս Պելլիգրինին ընդդեմ Իտալիայի (Pellegrini v. Italy) գործով 2001 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 30882/96, կետ 45: Ֆ. Ռ.-ն ընդդեմ Շվեյցարիայի (F. R. v. Switzerland) գործով 2001 թվականի սեպտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 37292/97, կետ 39:

հավասարության և մրցակցության սկզբունքները հստակ ամրագրված չեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից՝ 6-րդ հոդվածում նշված «արդարացի լսումներ» (fair hearing) հասկացության մեկնաբանությունների արդյունքում ձևավորվել է հստակ նախադեպ, համաձայն որի՝ լսումների արդարացիության տարրերից են դատավարության կողմերի հավասարությունը և մրցակցային դատավարությունը, որոնք սերտորեն կապված են միմյանց հետ: Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջը համարելով դատավարության մրցակցության և հավասարության սկզբունքներ, միաժամանակ հետևողականորեն իր վճիռներում բացահայտել է այդ սկզբունքների բովանդակությունը, որոնց համաձայն՝ «կողմերի հավասարությունը» նշանակում է, որ դատավարության յուրաքանչյուր կողմին պետք է ընձեռվի պատշաճ հնարավորություն ներկայացնելու իր գործը, ներառյալ՝ ապացույցները, այնպիսի պայմաններում, որոնք նրա համար մյուս կողմի համեմատությամբ չեն ստեղծի անբարենպաստ վիճակ:

Չունենալով հստակ օրենսդրական ուղենիշներ՝ հանրային իշխանության մարմինը չի կողմնորոշվում, թե ինչ կանոններ պետք է պահպանվեն համապատասխան գործընթացում: ԿԸՀ-ից Մարդու իրավունքների պաշտպանին տրամադրած պատասխանի համաձայն՝ պատգամավորի թեկնածուի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համաձայնություն տալու վերաբերյալ Ընտրական օրենսգրքի 90-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ ԿԸՀ լիազորությունների իրականացումը կարգավորող կամ միջնորդությունների քննարկման կարգը սահմանող իրավական կոնկրետ ակտեր կամ կարգավորումներ առկա չեն:

Իր վերաբերյալ կայացվող որոշման և դրանով իր իրավունքների սահմանափակման վերաբերյալ գործընթացներում գերակա կարևորություն ունի տվյալ մարդու լսված լինելու իրավունքի պահպանումը: Անձին չլսելը կամ լսված լինելու իրավունքի իրացման ձևական պահպանումն անընդունելի երևույթ է, ինչն անխուսափելիորեն հանգեցնելու է մարդու հիմնարար իրավունքների խախտման:

Լսված լինելու իրավունքի էության անդրադարձել է Սահմանադրական դատարանը՝ 2020 թվականի մայիսի 12-ի թիվ ՍԴՈ-1529 որոշմամբ արձանագրելով, որ՝

- լսված լինելը վարչական մարմինների կողմից գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության ընթացքում մարդու և քաղաքացու *իրավական պաշտպանության միջոց է*, որը հնարավորություն է ընձեռում, որ յուրաքանչյուր ոք առարկություն ներկայացնի կամ այլ կերպ իր կարծիքն արտահայտի իր նկատմամբ կայացվելիք և իր իրավունքներին կամ ազատություններին միջամտող ցանկացած վարչական ակտի առնչությամբ,

- անձի լսված լինելու իրավունքի իրականացումն ունի հետևյալ գործառույթային նշանակությունը. մի կողմից՝ անձի համար երաշխավորվում է վարչական մարմնի միջամտող անհատական ակտի դեմ *արդյունավետ պաշտպանության* ապահովման հնարավորություն, իսկ մյուս կողմից՝ վարչական մարմինը վարչական վարույթի շրջանակներում պարտավոր է քննարկել գործի փաստական հանգամանքներն ամբողջությամբ և պարզել դրանց *օբյեկտիվությունը և լիարժեքությունը՝ վարույթի մասնակիցների ներկայացրած փաստարկներն ու դիրքորոշումները քննարկման առարկա դարձնելու միջոցով,*

- լսված լինելու իրավունքը սահմանադրորեն երաշխավորվում է միայն այն վարչական ընթացակարգերում, որոնք ուղղված են անձանց նկատմամբ *միջամտող* անհատական ակտ ընդունելուն:

Եվրոպական միության հիմնական իրավունքների մասին խարտիայի 41-րդ հոդվածը ևս ամրագրում է լսված լինելու իրավունքը, նախատեսելով, որ յուրաքանչյուր ոք ունի լսված լինելու իրավունք «(...) ցանկացած անհատական միջոցի դեմ, որը կարող է անբարենպաստ կերպով ազդել այդ անձի վրա:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2007 թվականի հունիսի 20-ի «Լավ վարչարարության մասին» թիվ Rec(2007)7 հանձնարարականի<sup>29</sup> 14-րդ հոդվածի համաձայն՝ եթե մարմինը մտադիր է անհատական որոշում կայացնել, որը կարող է ուղղակիորեն և բացասաբար ազդել ֆիզիկական անձանց իրավունքների վրա, և հաշվի առնելով, որ հնարավորություն չի տրվել նրանց արտահայտելու իրենց տեսակետները, այդպիսի անձինք **պետք է հնարավորություն ունենան արտահայտելու իրենց** անհրաժեշտության դեպքում՝ իրենց նախընտրած անձի օժանդակությամբ:

Նույն հանձնարարականի 15-րդ հոդվածի համաձայն՝ եթե վարչական մարմինն առաջարկում է ընդունել ոչ կարգավորող որոշում, որը կարող է ազդել անորոշ թվով անձանց վրա, ապա պետք է սահմանվեն ընթացակարգեր, որոնք թույլ կտան նրանց մասնակցել որոշումների կայացման գործընթացին, ինչպիսիք են գրավոր դիտողությունները, լսումները, խորհրդատվությունները, հանրային հարցումները (...): Այս ընթացակարգերին առնչվող շահագրգիռ անձինք պետք է հստակ տեղեկացվեն քննարկվող առաջարկությունների մասին և **իրենց տեսակետները հայտնելու հնարավորություն ունենան:** Վարույթները պետք է անցկացվեն ողջամիտ ժամկետում:

Լսված լինելու իրավունքին անդրադարձ է առկա նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ 1977 թվականի սեպտեմբերի 28-ի «Վարչական մարմինների ակտերի առնչությամբ անհատի պաշտպանության վերաբերյալ» թիվ 77 (31) բանաձևում, որով սահմանված է, որ անձն իրավունք ունի ներկայացնելու իր ապացույցները և

<sup>29</sup> Հասանելի է [https://search.coe.int/cm/Pages/result\\_details.aspx?ObjectId=09000016805d5bb1](https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectId=09000016805d5bb1) հղումով:

փաստարկները «(...) ցանկացած վարչական ակտի առնչությամբ, որը կարող է անբարենպաստ կերպով ազդել վերջինիս իրավունքների, ազատությունների կամ շահերի վրա:

Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների կոմիտեի 2007 թվականի օգոստոսի 23-ի «Դատարանների և տրիբունալների առջև բոլորի հավասարության և արդար դատաքննության իրավունքի մասին» թիվ 32 մեկնաբանության 2-րդ կետի համաձայն՝ դատարանների և տրիբունալների առջև բոլորի հավասարությունը և արդար դատաքննությունը մարդու իրավունքների պաշտպանության էական տարրերն են և օրենքի գերակայության ապահովման համար ծառայում են որպես ընթացակարգային միջոց: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածը նպատակ ունի ապահովել արդարադատության պատշաճ իրականացումը, և այդ նպատակով երաշխավորում է մի շարք հատուկ իրավունքներ<sup>30</sup>:

«Սահմանադրության 50-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածով սահմանված է, որ յուրաքանչյուր ոք, ում նույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

Այսպիսով, վերոգրյալի վերլուծությունը փաստում է, որ քրեական վարույթի շրջանակում մարդու իրավունքների նկատմամբ պետության միջամտության թույլտվությանը կամ իրավունքների սահմանափակումներին առնչվող լուծումներն ինքնանպատակ չեն, դրանց նպատակը կողմերի դիրքորոշումներն ու առարկությունները լսելն է և միայն դրանից հետո լուծումների ընթացքում հնչեցված դիտարկումների հաշվառմամբ՝ որոշման կայացումը:

**Ավելին, երբ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն ուսումնասիրել է ԿԸԿ-ի նիստերի արձանագրություններն ու մյուս նյութերը, պարզվել է, որ առկա են նաև իրավիճակներ, երբ մինչև կողմերին լսելը Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, նիստը կամ քննարկումը սկսում է՝ իր հետ ունենալով նախապես**

30

Հասանելի

է

[https://www.refworld.org/cgi-](https://www.refworld.org/cgi-bin/texis/vtx/rwmain?page=search&docid=478b2b2f2&skip=0&query=comment%20fair%20trial)

[bin/texis/vtx/rwmain?page=search&docid=478b2b2f2&skip=0&query=comment%20fair%20trial](https://www.refworld.org/cgi-bin/texis/vtx/rwmain?page=search&docid=478b2b2f2&skip=0&query=comment%20fair%20trial) հղումով:

**կազմված քրեական հետապնդման մարմնի միջնորդությունը բավարարելու մասին որոշման նախագծի տեքստը:**

Այս վիճակը վկայում է, որ մարդու նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու գործընթացը ձևական է, նենգափոխում է ողջ գործընթացի էությունը, ինչն էլ իր հերթին վարույթն իրականացնող մարմնի համար կայացվելիք որոշումը դարձնում է կանխորոշված: Ակնհայտ է, որ իմաստագրկվում է ողջ գործընթացը քրեական հետապնդման մարմնի համար ողջ գործընթացի ելքը դառնում է ակնհայտ կանխորոշված: Նման պայմաններում ԿԸՀ-ում գործընթացը կամ վարույթը կոնկրետ մարդու տեսանկյունից դառնում է առավել վտանգավոր, քանի որ երաշխիքի անվան ներքո տեղի է ունենում ձևական, նախապես կանխորոշված գործընթաց՝ պատված գեղեցիկ շղարշով:

Ավելին, ինչպես արդեն նշվել է, Մարդու իրավունքների պաշտպանի 2021 թվականի հուլիսի 21-ի գրության ի պատասխան՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը տեղեկացրել է, որ Սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ հանձնաժողովի լիազորությունների իրականացումը կարգավորող կամ միջնորդությունների քննարկման կարգը սահմանող իրավական կոնկրետ ակտեր կամ կարգավորումներ առկա չեն:

Ավելին, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի հուլիսի 15-ի արտահերթ նիստի թիվ 30 արձանագրության ուսումնասիրությամբ վեր է հանվել, որ Արթուր Սարգսյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու և կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ համաձայնություն տալու միջնորդությունների քննարկման ընթացքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ի պատասխան վարույթների մեկով փաստաբանների նկատառմանը, որ դատախազությունը միջնորդությամբ բավարար հիմքեր չի ներկայացրել, նշել է. **«սա ընդամենը վարչական վարույթ է և ԿԸՀ-ն քրեադատավարական մանրուքների մեջ չի կարող խորանալ, քանզի, առաջինը՝ բավարար գիտելիքներ և փորձառություն չունի փվյալ ոլորտում, որպեսզի կարողանա առանձնացնել, պարճառաբանել, թե ինչու այս հոդվածով բավարարել միջնորդությունը, իսկ այլ հոդվածով՝ ոչ: ԿԸՀ-ն այն արյանը չէ, որ պետք է ընդունված կամ չընդունված համարել կողմի կողմից բերված պարճառաբանությունները, այն է՝ մեղսագրվող արարքը այս կամ այն դեպքի հետ կապ ունի, թե՛ ոչ, քանի որ ԿԸՀ-ի և դատական շեմերը շար փարբեր են:»:**

**Հարկ է նշել նաև, որ Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 13-ի նիստում պարզամավորներից մեկի հարցին՝ կապված Ընտրական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի հետ, ԿԸՀ նախագահը պարասխանվել է. «իրավադրույթի անգամ ձևակերպումը, եթե մենք նայում ենք**

**զուտ շարահյուսական տեսանկյունից, ինքը արդեն որոշակի փարակարծությունների ու փարամենկնաբանումների հնարավորություն է փալիս: Բայց այստեղ խնդիրը հետևյալն է: Այսինքն, սահմանված է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հարուցելու համար փալիս է համաձայնություն (ի նկատի ունենալով քրեական հետապնդման հարուցում, և, ուրեմն, կալանքի համաձայնություն):**

**Բայց տեղեկացնեմ, որ բնական է, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պետական մարմին է (...) և սրանով պայմանավորված՝ իրոք կիրառման հարթությունում առաջացան բազմաթիվ հարցադրումներ՝ օրինակի համար, ի՞նչ վարույթ է դա, արդյո՞ք պետք է բողոքարկելի լինի այդ որոշումը թե ոչ, արդյո՞ք այդ նիստերը պետք է իրականացվեն հրապարակային, թե ոչ հրապարակային, լսված լինելու իրավունքի պաշտպանություն, և, թերևս ամենակարևոր խնդիրը՝ ի՞նչ մակարդակի պետք է հասնի Կենտրոնական ընտրական հանձնաժողովից հիմքերի ուսումնասիրման աշխատանքը: Որովհետև, եթե սկսում ես հիմքերը ուսումնասիրել, վարչական վարույթից տեղափոխում է իրականացվում, թերևս, բոլորովին այլ վարույթ: Եվ ահա այս պարագան էր, որ, չունի օրենսդրական պատասխաններ: Ի դեպ, անհասկանալի էր նաև այդ որոշման բողոքարկման կարգը, ի դեպ, թե՛ բավարարելու, թե՛ մերժելու, իրավական հետևանք, բողոքարկման մեխանիզմներ և այլն»<sup>31</sup>:**

**Նշվածի համատեքստում հարկ է նկատել, որ եթե Կենտրոնական ընտրական հանձնաժողովը «բավարար գիտելիքներ և փորձառություն չունի փվյալ ոլորտում», ապա ինչու փվյալ հիմքով չի մերժում ներկայացված միջնորդությունները, այլ հակառակ, ընդունելով, որ «քրեադատարական մանրուքների մեջ չի կարող խորանալ», այնուամենայնիվ բավարարում է դրանք:**

Ավելին, ըստ փաստաբանների՝ ԿԸՀ-ում կոպիտ կերպով խախտվել են վստահորդների իրավունքները: Փաստաբաններից մեկի պնդմամբ՝ ԿԸՀ-ն իրականացրել է ձևական նիստեր և կայացված որոշումներով համաձայնություն է տվել իր վստահորդի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և ազատությունից զրկելու վերաբերյալ, սակայն այդ գործընթացը իրականացվել է առանց վստահորդի մասնակցության, ուստի նա ապօրինի կերպով զրկվել է իրեն առնչվող գործի անաչառ և արդարացի քննության, այդ թվում՝ լսված լինելու, հակառակ կողմի միջնորդության վերաբերյալ իր դիրքորոշումը հայտնելու և պաշտպանվելու իրավունքներից, որպիսի հիմքով ԿԸՀ-ի որոշումները չեն կարող համարվել օրինական:

**Պետք է նշել նաև, որ օրենսդրի կողմից հետևողական չլինելու և մարդու սահմանադրական իրավունքների վրա բացասական ազդեցություն թողնող անորոշ վիճակի պատճառով հակասություններ կան նաև Վարչական դատարանների և ԿԸՀ-**

<sup>31</sup> Հասանելի է <https://www.youtube.com/watch?v=FFH1wROMPKY> հղումով:

**ի միջև: Մասնավորապես, Վարչական դատարանի՝ սույն զեկույցում ներկայացված ակտում նշվում է, որ ԿԸՀ-ում տեղի ունեցող ընթացակարգը վարչական վարույթ չէ, իսկ ԿԸՀ նախագահի մասնակցությամբ ԱԺ-ում վերը մեջբերված քննարկումների ժամանակ նշվում է, որ դա վարչական վարույթ է: Ակնհայտ է, որ սա նույնպես ավելացնում է անորոշությունը և էլ ավելի խոցելի է դարձնում մարդու վիճակը, նրա սահմանադրական իրավունքների ապահովումը:**

Հարկ ենք համարում նաև անդրադառնալ 2021 թվականի օգոստոս ամսվա վերջին ՀՀ գլխավոր դատախազության կողմից ««Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի մշակմանը<sup>32</sup>, որով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել ««Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասը, փոխարենը՝ լրացնելով նոր՝ «Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի կամ մինչև պատգամավորի լիազորությունները ստանձնելն ընտրված պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցի քննությունը և լուծումը Կենտրոնական ընտրական հանձնաժողովում» վերտառությամբ՝ 90՝ հոդվածով:

Տվյալ Նախագծի հիմնավորումներում ևս նշված է. «Օրենսդիրը, սահմանելով նման իրավիճակներում Կենտրոնական ընտրական հանձնաժողով դիմելու և հանձնաժողովի համաձայնությունը ստանալու պայման, այդուհանդերձ, որևէ կարգավորման չի ենթարկել այն, թե որ մարմինը՝ նախաքննական մարմինը, թե՛ դատախազը պետք է դիմի նման համաձայնություն ստանալու, ինչ կարգով և ժամկետում պետք է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը քննարկի ներկայացված միջնորդությունը, ովքեր պետք է մասնակցեն դրա քննարկմանը և ինչ որոշում պետք է կայացվի:»: Այսինքն՝ Դատախազությունը ևս համակարծիք է, որ բացակայում են քննարկվող կարգավորման կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը:

Սակայն պետք է նշել, որ Նախագծի և դրան կից ներկայացված հիմնավորումների համալիր դիտարկումը բերում է համոզման, որ նախագծային լուծումների հիմքում ընկած է ոչ թե մարդու համընդհանուր իրավունքների պատշաճ երաշխավորման պահանջը, այլ դրանք իրականում առավելապես ուղղված են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հետ հարաբերություններում Դատախազության դերի հստակեցմանը, նրա գործառույթների պարզեցմանը և կարգավորմանը: Մասնավորապես, նախագծով ընդլայնվում է իրավական երաշխիքից օգտվող սուբյեկտների ցանկը՝ ներառելով նաև կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված

<sup>32</sup> Հասանելի է <https://www.e-draft.am/projects/3512/about> հետևյալ հղումով:



թեկնածուին, միջնորդությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողով դիմող սուբյեկտը, նիստ հրավիրելու և որոշում կայացնելու ժամկետը, նիստի և որոշում կայացնելու համար անհրաժեշտ ձայների հարցը և այլն: Ինչ վերաբերվում է ԿԸՀ անդամների ձայների համամասնության, քվեարկության ընթացքում ձայների բախշում հարցին, ապա այն ևս ունի կարևոր նշանակություն, քանի որ գործնականում դատարանները հրաժարվում են քննարկման առարկա դարձնել ԿԸՀ-ի որոշումը:

**Այսպիսով, սույն զեկույցով բարձրաձայնված հիմնական հարցերը նախագծի ընդունմամբ ևս շարունակելու են մնալ խնդրահարույց, իսկ նախագծի ընդունվելու դեպքում, միևնույն է, չի լինելու որևէ ազդեցություն այն անձանց համար, ում նկատմամբ արդեն իսկ գործադրվել է Ընտրական օրենսգրքի 90-րդ հոդվածի 5-րդ մասը:**

**Չեն լուծվելու այն մարդկանց պաշտպանության հարցերը, որոնց վերաբերյալ արդեն իսկ տրվել է քրեական հետապնդում հարուցելու կամ ազատությունից զրկելու համաձայնություն: Իսկ կոնկրետ մարդկանց իրավունքների պաշտպանության համար սույն զեկույցում ներկայացվող հարցի կապակցությամբ ՍԴ որոշման առկայությունը կունենա սկզբունքային կարևորություն, քանի որ այն նոր հանգամանք կարող է լինել քրեական դատավարությունում նրանց իրավունքների պաշտպանության համար:**

Վերը նշվածով հանդերձ, ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված են որոշակի անձանց շրջանակներ, որոնք քրեական դատավարության ոլորտ ներգրավվում են միայն հատուկ կամ լրացուցիչ պայմանների դեպքում: Այդ հատուկ կամ լրացուցիչ պայմանները կոչված են ծառայելու հավելյալ երաշխիքներ՝ պաշտպանելու համար մարդուն քրեադատավարական միջամտություններից՝ հաշվի առնելով նրա գործունեությունը: Նշվածը չի նշանակում, որ տվյալ անձանց նկատմամբ հնարավոր չէ իրականացնել քրեական հետապնդում, բայց դա պետք է իրականացվի հստակ կանոնների առկայությամբ, երաշխիքների պահպանմամբ, որոնք իրենց հերթին պետք է լինեն կառուցակարգային և ընթացակարգային առումով հստակ:

Դրանց բացակայության դեպքում ԿԸՀ-ում ընթացակարգը և որոշումները սահմանադրական իրավունքների խախտման ճանապարհ են բացում դեպի իրավունքների միջամտության: Անգամ եթե հետագայում ընթացակարգերը պահպանվեն, միևնույն է սկզբնական տիտղոսը խաթարված է:

Կարևորագույն սահմանադրական գործառույթներ իրականացնող մի շարք պաշտոնատար անձինք Սահմանադրությամբ օժտված են անձեռնմխելիությամբ, որի նպատակը, նախևառաջ, այդ անձանց բնականոն և արդյունավետ գործունեության իրականացման երաշխավորումն է: Ի թիվս այլոց, անձեռնմխելիությամբ են օժտված նաև պատգամավորի թեկնածուները:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուներ առաջադրելու իրավունք ունեն կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները: Սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

Այսինքն՝ Սահմանադրությունն ամրագրում է ընտրվելու հիմնարար իրավունքը, որը երաշխավորված է միջազգայնորեն: Սրա հիման վրա էլ արդեն օրենսդրությամբ ամրագրվել են մեխանիզմներ, որոնք կոչված են երաշխավորելու սահմանադրական նշված իրավունքների լիարժեք իրացումը: Այդ կարգավորումները պետք է լինեն արդյունավետ և իմաստավորված, որպեսզի մարդու իրավունքները պատրանքային չդառնան:

Կոնկրետ իրավիճակում օրենսդիրը նախատեսել է, որ նշված անձանց նկատմամբ առանց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնության, քրեական հետապնդում հարուցվել չի կարող և նա անձնական ազատությունից չզրկվել չի կարող:

Մասնավորապես, Սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվում է, որ պատգամավորի թեկնածուի՝ մինչև պատգամավորի լիազորությունները ստանձնելն ընտրված պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությամբ: Ըստ նույն կարգավորման՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշված հարցի վերաբերյալ որոշում ընդունում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով:

Փաստացի, նորմի տառացի մեկնաբանությունը հանգում է նրան, որ մինչև պատգամավորի լիազորությունները ստանձնելը, ընտրված պատգամավորն ունենա այնպիսի պաշտպանվածություն, որ քրեական հետապնդում հարուցելը կամ ազատությունից զրկելը հնարավոր լինի միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնության պարագայում:

Նշված հարցերի հետ կապված բոլոր խնդիրները և դրանց առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումները մանրամասն շարադրված են սույն զեկույցի նախորդ շարադրանքում:

Հարցը դիտարկելով միայն մարդու իրավունքների տեսանկյունից՝ այստեղ հարկ ենք համարում իրականացնել որոշակի համեմատություն: Մասնավորապես, խոսքը «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ Սահմանադրական օրենքի՝ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելուն

համաձայնություն տալու կարգավորումները Ընտրական օրենսգրքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի համեմատության լույսի ներքո դիտարկելու մասին է: Աժ գործող պատգամավորի դեպքում նախատեսված են անձեռնմխելիությունը վերացնելու հստակ կանոններ<sup>33</sup>: Մասնավորապես, տվյալ հոդվածի առաջին մասով սահմանվում է, որ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու միջնորդագիրը Ազգային ժողովի նախագահին է ներկայացնում գլխավոր դատախազը, իսկ Ազգային ժողովի նախագահին այդ մասին անմիջապես տեղեկացնում է միջնորդագրում նշված պատգամավորին, իսկ դրա անհնարինության դեպքում հանդես է գալիս հայտարարությամբ: Միջնորդագրին կցվում է պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը: Նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստերում միջնորդագրի քննարկման հստակ կարգ, այն է՝ մինչև քսանական թույլ տևողությամբ ելույթներով հանդես են գալիս գլխավոր դատախազը և միջնորդագրում նշված պատգամավորը, որոնց կարող են հարցեր տրվել, այնուհետև տեղի է ունենում մտքերի փոխանակություն, իսկ միջնորդագրում նշված պատգամավորին և գլխավոր դատախազին եզրափակիչ ելույթի համար հատկացվում է մինչև 20 թույլ: Հոդվածի մյուս մասերով նախատեսվում է միջնորդագրում նշված պատգամավորի՝ հարցի քննարկման սկզբում Ազգային ժողովի նիստից անհարգելի պատճառով բացակայելու պարագայում հարցը առանց նրա մասնակցության քննարկվելու հնարավորություն, սահմանվում է պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին Ազգային ժողովի որոշումման ստորագրման և հրապարակման կարգը:

ԿԸՀ-ի պարագայում, ինչպես արդեն ցույց է տրվել, չկա որևէ կարգավորում: Նույն հաստատել է նաև ԿԸՀ-ն: Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանի 2021 թվականի հուլիսի 16-ի գրության ի պատասխան՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը տեղեկացրել է, որ Սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ հանձնաժողովի լիազորությունների իրականացումը կարգավորող կամ միջնորդությունների քննարկման կարգը սահմանող իրավական կոնկրետ ակտեր կամ կարգավորումներ առկա չեն:

<sup>33</sup> Տե՛ս «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ Սահմանադրական օրենքի «Պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու կարգը» վերտառությամբ 108-րդ հոդվածը

*ԿԸՀ-ի նշված որոշումներով ու այդ որոշումների հիման վրա առաջացած ընթացակարգի խնդիրների կապակցությամբ փաստաբանները բարձրացրել են նաև ԿԸՀ-ի կողմից Ընտրական օրենսգրքի փարբերակված կիրառության հարց՝ իրենց վստահորդների նկատմամբ բացասական ազդեցությամբ: Ընդ որում, առանց որևէ գնահատականի՝ այս պահին հարկ ենք համարում նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրությունները նույնպես որոշակի փարբերակվածություն արձանագրել են:*

*Նշվածի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմումով փաստաբանները հայտնել են նաև, որ առաջին ատյանի դատարանում միջնորդության քննարկման հիմքում դրված մեղադրանքը և ԿԸՀ-ին ներկայացված մեղադրանքները, այլ խոսքով՝ այն հանրորեն վրանգավոր արարքը, որ հիմք է հանդիսացել իրենց վստահորդին անձնական ազատությունը սահմանափակելու համար միմյանցից էականորեն փարբերվում են ծավալային առումով: Այս ամենը ևս մեկ անգամ ապացուցում է, որ միջնորդությունները մակերեսային են դիտարկվել, իսկ համաձայնություն փալը կրել է լուկ ֆորմալ բնույթ:*

Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով սույն զեկույցով ներկայացված խնդիրը՝ հարկ է նշել, որ պետությունը պարտավորվել է ստեղծել պետական-իրավական այնպիսի կառուցակարգեր, որոնք արդյունավետ ձևով կարող են, ի թիվս այլնի՝ կանխել ցանկացած խախտում (ՍԴՈ-1571), մինչդեռ ակնհայտ է, որ մինչև պատգամավորի լիազորությունները ստանձնելն ընտրված պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությունն ստանալու կառուցակարգեր և պատշաճ ընթացակարգային նորմեր չսահմանելով՝ պետությունը չի կատարել իր վրա դրված այդ պարտականությունը:

Մյուս կողմից, ցանկացած օրենսդրական կարգավորում պետք է նպատակ ունենա և ապահովի բոլոր հիմնական իրավունքների **արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր**: Ընդգծվածներն այն պայմաններն են, որոնց միաժամանակյա առկայությունն է, որ ցանկացած օրենսդրական կարգավորման մեջ, առավել ևս *որևէ հիմնական իրավունք կամ ազատություն սահմանափակող* օրենսդրական կարգավորման մեջ կարող է ապահովվել դրա համապատասխանությունը Սահմանադրությանը (ՍԴՈ-1546): Մինչդեռ, անառարկելի փաստ է, որ օրենսդիրը չի սահմանել մինչև պատգամավորի լիազորությունները ստանձնելն ընտրված պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությունն ստանալու և այդպիսով՝

անձի անձնական ազատության իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Նշվածը, Սահմանադրական դատարանի 2020 թվականի հունիսի 18-ի թիվ ՍԴԴ-1546 որոշմամբ արտահայտված դիրքորոշումների հաշվառմամբ, հանգեցնում է սահմանադրական իրավունքների խախտման անխուսափելիորեն առաջացնում է «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի Սահմանադրության համապատասխանության հարց:

Քննարկվող հարցը կարգավորող անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի բացակայությունն իր հերթին տրամաբանորեն հանգեցնում է իրավական որոշակիության սկզբունքի ոտնահարման:

Սահմանադրության 79-րդ հոդվածը սահմանում է, որ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) 2019 թվականի հունիսի 24-ի «Խորհրդարանական մեծամասնության և ընդդիմության հարաբերությունների պարամետրերը ժողովրդավարությունում» վերտառությամբ թիվ 845/2016 եզրակացության 148-րդ կետի համաձայն՝ անձեռնմխելիությունը կարող է երկու տեսակի լինել. պատասխանատվությունից ազատում, որը նշանակում է, որ պատգամավորը չի կարող պատասխանատվության ենթարկվել իր մանդատի իրականացման շրջանակում կատարած քվեարկության և հայտնած կարծիքների համար, և անխախտելիություն, որը նշանակում է, որ պատգամավորը չի կարող առանց խորհրդարանի կամ վերջինիս որևէ մարմնի թույլտվության ենթարկվել հարկադրանքի որոշ միջոցների, օրինակ՝ ձերբակալության: Նույն եզրակացության 151-րդ կետի համաձայն՝ ընթացակարգային երաշխիքներ պետք է գոյություն ունենան, որոնք փոքրամասնության անդամներին կպաշտպանեն քաղաքականացված քրեական հետապնդումներից: Մինևույն ժամանակ, այդ ընթացակարգային երաշխիքները չպետք է անհնար դարձնեն քրեական հետապնդումը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ պատգամավորական անձեռնմխելիությունը ոչ թե անձնական առավելություն է ի շահ պատգամավորի, այլ առավելություն է՝ կապված պատգամավորի կարգավիճակի հետ<sup>34</sup>:

<sup>34</sup> Տե՛ս Կարտն ընդդեմ Թուրքիայի (Kart v. Turkey) գործով 2009 թվականի դեկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 8917/05, կետ 97:

Ամփոփելով վերոգրյալը՝ պետք է նշել, որ թեև օրենսդիրը սահմանել է, որ պատգամավորի թեկնածուի՝ մինչև պատգամավորի լիազորություններ ստանձնելն ընտրված պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդման հարուցումը և տվյալ անձանց ազատությունից զրկելը կարող է իրականացվել միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությամբ, սակայն անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի գործարկման բացակայությունը խնդիրներ է առաջացնում արդար դատաքննության, անձնական ազատության, որոշակիության և սահմանադրական այլ իրավունքների իրացման և սկզբունքների պահպանման տեսանկյունից:

